

## ԱԶԳԱԳԻՐ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

### «Էքսպրես Կրեդիտ ունիվերսալ վարկային կազմակերպություն»

#### փակ բաժնետիրական ընկերություն

**Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Չարենցի 58, բն. 1,**

**Հեռախոս՝ (+374 10) 57 21 37 Ֆաքս՝ (+374 10) 57 51 77,**

**Էլ-փոստ՝ [finar@netsys.am](mailto:finar@netsys.am)**

արժեթղթերի դասը՝	Անվանական արժեկտրոնային պարտատուճա
արժեթղթերի ձևը՝	Ոչ փաստաթղթային
արժեթղթերի քանակը՝	6,000 (վեց հազար) հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	25,000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ
արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	150,000,000 (հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ

**«ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ՍՈՒՅՆ ԱԶԳԱԳՐՈՒՄ ԶԵՏԵՂՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՃՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԻՐ: ԳՐԱՆՑՄԱՆ ՓԱՍՏԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԳՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ»:**

*«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի ամբողջականությունը»:*

#### Ստորագրող անձինք՝

Արմեն Արզումանյան	Խորհրդի նախագահ, Գործադիր տնօրեն	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		
Արթուր Ծատուրյան	Խորհրդի անդամ	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		
Ռուզաննա Սահակյան	Խորհրդի անդամ, Գլխավոր հաշվապահ	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		

#### Ստորագրությունները վավերացնում են՝

Արմեն Արզումանյան	Գործադիր տնօրեն	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		

ԱԶԳԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ.....	3
1.1. Տեղեկություններ թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ .....	3
1.2. Տեղեկություններ թողարկողի վերաբերյալ .....	5
2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՍՄԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	9
2.1. Ընդհանուր տեղեկություններ .....	9
2.2. Պարտատոմսերի գնի վերաբերյալ տեղեկություններ.....	10
2.3. Պարտատոմսերից ստացվող եկամուտների վերաբերյալ տեղեկություններ .....	11
2.4. Սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ.....	11
2.5. Պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցող անձինք .....	11
2.6. Բաժանորդագրությունների վերաբերյալ տեղեկություններ .....	12
2.7. Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի նկարագիրը .....	13
2.8. Պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները.....	13
2.9. Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումը .....	14
2.10. Տեղեկություններ շուկա ստեղծողի վերաբերյալ .....	14
2.11. Թողարկման նպատակը .....	14
3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	15
3.1. Ընդհանուր տեղեկություններ.....	15
3.2. Տեղեկություններ Թողարկողի գործունեության վերաբերյալ .....	17
3.3. Տեղեկություններ Թողարկողի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ .....	31
3.4. Տեղեկություններ Թողարկողի կառավարման մարմինների և կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ .....	34
3.5. Տեղեկություններ Թողարկողի հետ փոխկապակցված անձանց, թողարկողի սեփականատերերի վերաբերյալ .....	40
3.6. Տեղեկություններ Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ .....	40

Կ.Տ.

# 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## 1.1. Տեղեկություններ թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ

Թողարկողի կողմից սույն ազդագրի շրջանակում առաջարկվում են 150,000,000 ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 25,000 ՀՀ դրամ անվանական արժեքով 6,000 հատ անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր:

Համաձայն Թողարկողի և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի միջև 16.05.2008թ. կնքված Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման թիվ IB/08-001 պայմանագրի 2.2.5. կետի՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն կազմակերպում է պարտատոմսերի տեղաբաշխումը երաշխավորված եղանակով: Նշված պայմանագրով իրեն վերապահված իրավասության շրջանակներում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն նախատեսում է 25,000,000 մլն ՀՀ դրամ (1,000 հատ) ընդհանուր ծավալով պարտատոմսեր ձեռք բերել՝ երկրորդային շուկայում պարտադիր գնանշումներ կազմակերպելու նկատառումներից ելնելով: Սնացած 125 մլն ՀՀ դրամի (5,000 հատ) պարտատոմսերը տեղաբաշխվելու են ազատ բաժանորդագրություն կազմակերպելու միջոցով՝ համաձայն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Գործադիր տնօրենի 01.07.2008թ. թիվ 192 Լ հրամանով հաստատված «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմսերի բաժանորդագրության ընթացակարգի (Ընթացակարգը ներկայացված է որպես ազդագրի հավելված):

Բաժանորդագրությունը սկսվում է պարտատոմսերի ազդագրի գրանցման օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրվանից և տևելու է 10 աշխատանքային օր:

Ներդրողները կարող են ազդագիրը ստանալ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գտնվելու վայրից (հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Խանջյան 13/2), նրա ինտերնետային կայքից ([www.armswissbank.am](http://www.armswissbank.am)), ինչպես նաև Թողարկողի գտնվելու վայրից (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի 58, բն. 1):

Ներդրողները բաժանորդագրության միջոցով կարող են պարտատոմս ձեռքբերել՝ Բաժանորդագրության ընթացակարգին կից հաստատված հայտը սահմանված կարգով լրացնելու և Բանկին ներկայացնելու միջոցով: Ներդրողների կողմից հայտերը կարող են ներկայացվել տեղաբաշխման ժամկետի ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում՝ ժամը 10:00-17:00:

Պարտատոմսերի դիմաց վճարումներն ընդունվելու են անկանխիկ եղանակով՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում Թողարկողի անունով բացված 25000130500310 բանկային հաշվին միանվագ կերպով փոխանցումների միջոցով: Ֆիզիկական անձինք պարտատոմսերի ձեռք բերման համար անհրաժեշտ գումարները Բանկ կարող են միանվագ կերպով մուտքագրել մաս կանխիկ եղանակով: Կանխիկ եղանակով գումարները մուտքագրելու դեպքում ներդրողը պարտատոմսերի ձեռք բերման հայտին կից Բանկ է ներկայացնում մաս անձնագրի պատճենը:

Եթե ներդրողների կողմից համապատասխան դրամական միջոցները նշված բանկային հաշվին վճարվել են մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00-ն, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվել են տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը և համապատասխան պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվում է այդ օրվա հաշվարկով:

Եթե տեղի է ունեցել պարտատոմսերի գերբաժանորդագրություն, ապա ներկայացված հայտերը բավարարվում են առաջնահերթության սկզբունքով, իսկ եթե տեղաբաշխման որևէ օրվա ընթացքում ներկայացված հայտերում ձեռքբերվող պարտատոմսերի ծավալը գերազանցում է տվյալ օրվա ընթացքում չվաճառված պարտատոմսերի ծավալը, ապա՝ մասնակիորեն՝ ըստ ներկայացված քանակների կազմված համամասնության: Ընդ որում՝ եթե առաջանում են ոչ ամբողջական պարտատոմսեր, ապա դրանք ենթակա են կտրացման թվաբանական կտրացման եղանակով: Չբավարարված պարտատոմսերի համապատասխան դրամական միջոցները «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից ենթակա են վերադարձման երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով (պարտատոմսերի ձեռք բերման հայտերում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):

Ներդրողները պարտատոմսերի հայտերը մուտքագրելուց հետո 9 ժամվա ընթացքում (աշխատանքային ժամերին) կարող են գրավոր կերպով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ից ամբողջությամբ կամ մասնակի հետկանչել իրենց բաժանորդագրությունները՝ եթե մինչև այդ

ներդրողների հայտերը չեն բավարարվել և տվյալ հայտերի հիման վրա գործարքներ չեն կատարվել: Եթե ներդրողի կողմից բաժանորդագրությունը հետ է կանչվում մասնակիորեն, ապա նախկինում ներկայացված հայտը համարվում է անվավեր և ներկայացվում է նոր հայտ: Հայտի ամբողջությամբ կամ մասնակի հետկանչման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա հայտի հետկանչման ամսաթվից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից ենթակա է վերադարձման՝ անկանխիկ եղանակով (պարտատոմսերի ձեռք բերման հայտերում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):

Պարտատոմսերի դիմաց նախատեսվում է վճարել արժեկտրոնային եկամուտ՝ տարեկան 12% տոկոսադրույքով: Արժեկտրոնները (տոկոսագումարները) վճարվում են կիսամյակային պարբերականությամբ՝ ՀՀ դրամով, պարտատոմսի անվանական արժեքի 6 տոկոսի չափով: Արժեկտրոնները վճարվում են անկանխիկ եղանակով՝ հաշվարկային բանկի կողմից, որը համապատասխան գումարները Թողարկողի հաշվից փոխանցում է սեփականատերերի համապատասխան բանկային հաշիվներին: Որպես հաշվարկային բանկ հանդես է գալու «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն:

Պարտատոմսերի մարմնն իրականացվում է ՀՀ դրամով և անվանական արժեքով: Պարտատոմսերի մարմնն օր է համարվում տեղաբաշխման սկսման օրվան հաջորդող 18-րդ ամսվա համապատասխան օրը (եթե նշված օրը աշխատանքային օր չէ, ապա դրան հաջորդող աշխատանքային օրը): Թողարկողը պարտավորվում է մինչև պարտատոմսերի մարմնն օրը հաշվարկային բանկում բացված հատուկ հաշվի վրա կուտակել պարտատոմսերի մարմնն համար անհրաժեշտ դրամական միջոցները, ինչպես նաև մինչև պարտատոմսերի մարմնն օրվան հաջորդող օրը հաշվարկային բանկ ներկայացնել մարմնն գումարներ ստացող անձանց անհրաժեշտ տվյալները: Հաշվարկային բանկը մարմնն գումարները վճարում է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

Սահմանված ժամկետում պարտավորությունները չկատարելու դեպքում Թողարկողը պարտավորվում է վճարել յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար վճարել մարմնն ենթակա գումարի 0.07%-ի չափով տույժ:

Թողարկողի պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտահարկով (ֆիզիկական անձանց համար)՝ օրենքով սահմանված կարգով:

Պարտատոմսերի ձեռք բերմամբ պարտատոմսերի սեփականատերերը ստանում են հետևյալ իրավունքները.

1. Ստանալ պարտատոմսով նախատեսված արժեկտրոնները և անվանական արժեքը:
2. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնների և/կամ մարմնն գումարը սույն ազդագրով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում Թողարկողից ստանալ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար մարմնն ենթակա գումարի 0.07%-ի չափով տույժ:
3. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարմնն գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ:
4. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարմնն գումարը սույն ազդագրով սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով (սնանկ ճանաչվելու արդյունքում) դատական կարգով լուծարման դեպքում օգտվել օրենքով պարտատիրոջ իրեն վերապահված իրավունքներից:
5. Իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը կարգավորված շուկայում (ֆոնդային բորսայում ցուցակված լինելու դեպքում) կամ դրանից դուրս՝ օրենքով սահմանված կարգով:
6. Օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:
7. Օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

Պարտատոմսերի ձեռք բերմամբ սեփականատերերը ստանձնում են հետևյալ պարտավորությունները՝

1. Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված պահառուի մոտ բացել արժեթղթերի անձնական հաշիվ:
2. Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը որևէ բանկում բացել բանկային հաշիվ:

3. Կատարել պարտատուների ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն:

## 1.2. Տեղեկություններ թողարկողի վերաբերյալ

### ա. ընդհանուր տեղեկություններ.

Թողարկողի անվանումն է՝ «Էքսպրես Կրեդիտ ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերություն:

Թողարկողը գրանցվել է 09.12.1997թ.՝ որպես «Ֆինար» փակ բաժնետիրական ընկերություն: Այնուհետև որոշում է կայացվել վերանվանել ընկերությունը որպես «Էքսպրես Կրեդիտ» փակ բաժնետիրական ընկերություն: «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ վարկային կազմակերպությունների գործունեությունը լիցենզավորված գործունեություն դառնալու պահանջի հիման վրա «Էքսպրես Կրեդիտ» փակ բաժնետիրական ընկերությունը «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով 11.02.2003թ. ՀՀ կենտրոնական բանկում վերագրանցվել է որպես վարկային կազմակերպություն՝ ստանալով «Էքսպրես Կրեդիտ ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերություն անվանումը:


Թողարկողի կանոնադրական կապիտալը կազմում է 155,000,000 (հարյուր հիսունհինգ միլիոն) ՀՀ դրամ, որը Թողարկողի բաժնետերերի կողմից ամբողջությամբ վճարված է: Կանոնադրական կապիտալը կազմված է 60,000 (վաթսույն հազար) հատ 2,500 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական անվանական բաժնետոմսերից և 2,000 (երկու հազար) հատ 2,500 ՀՀ դրամ անվանական արժեքով արտոնյալ բաժնետոմսերից:

### բ. Տեղեկություններ Թողարկողի գործունեության վերաբերյալ.

Որպես վարկային կազմակերպություն՝ Թողարկողի հիմնական գործունեությունը կենտրոնացված է ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկային ծառայությունների մատուցման ոլորտում: Այս բնագավառում հիմնական մասնակիցները հանդիսանում են առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները: Վերջին տարիներին այս ոլորտը դինամիկ զարգացում է ապրում: Դա պայմանավորված է ինչպես երկրում տնտեսության գործարար ակտիվությամբ և տնային տնտեսությունների մոտ կայուն եկամուտների ձևավորմամբ, այնպես էլ վարկային ռեսուրսների մատչելիությամբ: Որպես վերջինիս ապացույց կարելի է փաստել առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի ծավալների միտումները:

Ստորև բերված գծապատկերում ներկայացված են 31.12.2005թ. դրությամբ վարկային ներդրումների համեմատությամբ 31.12.2006թ. և 31.12.2007թ. դրությամբ վարկային ներդրումների աճի միտումները:

**Վարկային ներդրումների աճի միտումները**




Վարկային ներդրումների աճի միտումները մոտ ապագայում նույնպես կպահպանվեն, որը պայմանավորված է տնտեսությունում գործարար ակտիվության բարձր մակարդակով և ազգաբնակչության կողմից մասսայական վարկային ծառայություններից օգտվելու հանգամանքներով:

Թողարկողի կողմից առաջարկվում են սպառողական վարկեր ֆիզիկական անձանց և բիզնես վարկեր իրավաբանական անձանց (անհատ ձեռնարկատերերին): Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարիների ընթացքում Թողարկողի կողմից տրամադրված գրեթե բոլոր վարկերը սպառողական վարկեր են: Վարկերը տրամադրվում են մինչև 5 տարի մարման ժամկետով:

Թողարկողի վարկային պորտֆելի գերակշիռ մաս կազմող վարկերն անշարժ գույքով ապահովված սպառողական վարկերն են (Թողարկողի կողմից տրամադրված բիզնես վարկերը էական տոկոս չեն կազմում):

Գծապատկերում բերված են ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին երեք տարիների և 2008 թվականի առաջին եռամսյակի վերջին օրվա դրությամբ Թողարկողի վարկային պորտֆելի ծավալները:



Թողարկողի կողմից կատարված վարկային ներդրումների ծավալը բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից կատարված վարկային ներդրումների ընդհանուր ծավալում աննշան տոկոս է կազմում (31.12.2007թ. դրությամբ այն կազմում է 0.23%), իսկ միայն վարկային կազմակերպությունների կողմից կատարված վարկային ներդրումների ընդհանուր ծավալում այն 31.12.2007թ. դրությամբ կազմում է 2.8%:

Որպես Թողարկողի պոտենցիալ մրցակիցներ հանդես են գալիս բոլոր 22 առևտրային բանկերը և 20 վարկային կազմակերպությունները: Սակայն հաշվի առնելով, որ առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները, ելնելով իրենց գործունեության ռազմավարական ուղղություններից, ակտիվ գործունեություն են իրականացնում վարկային շուկայի տարբեր հատվածներում, այդ իսկ պատճառով Թողարկողի հետ նույն սեգմենտում (որպես նմանատիպ վարկերի տրամադրմամբ զբաղվող անձինք) որպես հիմնական մրցակիցներ կարելի է առանձնացնել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ին, «Յունիբանկ» ՓԲԸ-ին, «ԲՏԱ Ինվեստբանկ» ՓԲԸ-ին, «Ինեկո Բանկ» ՓԲԸ-ին, «Պրոկրեդիտ Բանկ» ՓԲԸ-ին, «Նորվիկ» ՈւՎԿ ՓԲԸ-ին, «Գառնի Ինվեստ» ՈւՎԿ ՓԲԸ-ին:

**գ. Տեղեկություններ Թողարկողի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ.**

Վերջին 3 տարվա համար Թողարկողի գուտ շահույթի մեծությունը ներկայացված է ստորև.

հազ. դրամ

	2005թ.	2006թ.	2007թ.
Զուտ տոկոսային եկամուտ	225,946	287,492	261,881
Գործառնական եկամուտ <sup>2</sup>	18,100	17,333	368,147

<sup>1</sup> Նշված ծավալներում ներառված չեն Թողարկողի կողմից դուրս գրված վարկերը:

<sup>2</sup> 2005, 2006 թվականների և 2007 թվականի համար նշված ցուցանիշի էական տարբերությունները պայմանավորված են հաշվարկների մեթոդի փոփոխության հանգամանքով, ուստի 2005 և 2006 թվականների

Չուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	103,549	189,861	345,750
Չուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	78,020	132,057	268,394

Թողարկողի Չուտ շահույթը կայուն աճի միտում ունի, քանի որ 2005 թվականի համեմատությամբ 2006թ. և 2007թ. Չուտ շահույթի աճը կազմել է համապատասխանաբար շուրջ 169.3% և 344%:

Վերջին 3 տարիների կտրվածքով Թողարկողի եկամտաբերության ցուցանիշները ներկայացված են ստորև.

	2005թ.	2006թ.	2007թ.
Ակտիվների եկամտաբերություն (%)	7.7	11.2	22.6
Սեփական կապիտալի եկամտաբերություն (%)	32.5	44.1	58.9

Ինչպես երևում է աղյուսակից, Թողարկողի եկամտաբերության բոլոր ցուցանիշները 2005-2007թթ.-ին դրսևորել են աճի միտում: Նշված ժամանակահատվածում աճել է ինչպես Թողարկողի Չուտ շահույթը, այնպես էլ՝ Թողարկողի մյուս ֆինանսական ցուցանիշները (ակտիվները և սեփական կապիտալը), սակայն Չուտ շահույթի բացարձակ աճը եղել է ավելի մեծ, քան մյուս ցուցանիշների բացարձակ աճը, ուստի յուրաքանչյուր տարի աճել է նաև եկամտաբերությունների չափը: Շահույթի նման աճի գործում էական դերակատարում են ունեցել այդ տարիների ընթացքում ստացված այլ գործառնական եկամուտները, որոնք հիմնականում պայմանավորված են արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ստացված եկամուտների ծավալով:

31.12.2005թ., 31.12.2006թ. և 31.12.2007թ. դրությամբ Թողարկողի ընդհանուր պարտավորությունները կազմել են ակտիվների համապատասխանաբար 76.3%, 74.6% և 61.6%-ը:

31.12.2005թ.-ի դրությամբ Թողարկողի սեփական կապիտալի մեծությունը կազմել է 240,157 հազ. դրամ, 31.12.2006թ.-ի դրությամբ՝ 299,656 հազ. դրամ և 31.12.2007թ.-ի դրությամբ 455,992 հազ. դրամ:

Փաստացի 31.03.08թ.-ի դրությամբ Չուտ շահույթը կազմել է 99,515 հազ. ՀՀ դրամ: Ազդագրի ներկայացման պահին Թողարկողի կանխատեսումները հանգեցնում են այն ենթադրությանը, որ 2008թ.-ի գործունեության արդյունքներով Թողարկողի Չուտ շահույթի մեծությունը կկազմի շուրջ 230,000 հազ. ՀՀ դրամ, իսկ 2009թ.-ին՝ 240,000 հազ. ՀՀ դրամ:

**դ. Տեղեկություններ Թողարկողի կառավարման մարմինների և կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ.**

Համաձայն Թողարկողի կանոնադրության՝ Թողարկողի կառավարման մարմիններն են բաժնետերերի ժողովը, խորհուրդը և գործադիր տնօրենը:

Թողարկողի կառավարմանը մասնակցող անձինք են՝

- Արմեն Արզումանյան – Խորհրդի նախագահ, Գործադիր տնօրեն,
- Արթուր Ծատուրյան – Խորհրդի անդամ,
- Ռուզաննա Սահակյան – Խորհրդի անդամ, Գլխավոր հաշվապահ,
- Աննա Դարբինյան – վերստուգող:

**ե. Տեղեկություններ Թողարկողի հետ փոխկապակցված անձանց, սեփականատերերի վերաբերյալ**

Թողարկողի հետ փոխկապակցված անձ է համարվում ՀՀ քաղաքացի Արմեն Արզումանյանը: Նրան է պատկանում Թողարկողի սովորական բաժնետոմսերի 100%-ը և արտոնյալ

---

ցուցանիշները 2007 թվականի համար հաշվարկված եղանակով հաշվելու դեպքում կստացվեն համապատասխանաբար՝ 244,046 հազ. դրամ և 304,825 հազ. դրամ:

բաժնետոմսերի 98.85%-ը: Վեջին 3 տարիների ընթացքում նա զբաղեցրել է Թողարկողի խորհրդի նախագահի ու գործադիր տնօրենի պաշտոնը:

Թողարկողը չունի իրավաբանական անձ հանդիսացող փոխկապակցված անձ:

Թողարկողը չունի ֆիզիկական կամ իրավաբանական անձ հանդիսացող նշանակալից սեփականատերեր:

**զ. Տեղեկություններ Թողարկողի թողարկված արժեթղթերի վերաբերյալ**

Թողարկողի կողմից նախկինում թողարկվել են ոչ փաստաթղթային անվանական սովորական բաժնետոմսեր և ոչ փաստաթղթային անվանական արտոնյալ բաժնետոմսեր:

Թողարկողի կողմից թողարկված սովորական և արտոնյալ բաժնետոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված չեն:

Թողարկողի կողմից թողարկված և տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի քանակը ազդագիրը ներկայացնելու պահին կազմում է 60,000 հատ՝ յուրաքանչյուրը 2,500 ՀՀ դրամ անվանական արժեքով: Տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 150,000,000 ՀՀ դրամ: Թողարկողի կողմից թողարկված և տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի քանակը կազմում է 2,000 հատ՝ յուրաքանչյուրը 2,500 ՀՀ դրամ անվանական արժեքով: Տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը կազմում է 5,000,000 ՀՀ դրամ:

Թողարկողի կողմից թողարկված սովորական և արտոնյալ բաժնետոմսերը մարման ժամկետ չունեն, այսինքն՝ դրանք կշրջանառվեն այնքան ժամանակ, քանի դեռ Թողարկողը չի վերակազմակերպվել կամ լուծարվել:

Թողարկողի կողմից թողարկված սովորական բաժնետոմսերով կատարվել է բաժանման 2 դեպք, մասնավորապես՝

- ա) 19.03.2003թ. բաժնետերերի ժողովի որոշմամբ 260 հատ 500,000 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերը բաժանվել և փոխարկվել են 2,600 հատ 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերի, այսինքն՝ բաժանումը տեղի է ունեցել 1/10 բաժանման գործակցով,
- բ) 30.11.2004թ. բաժնետերերի ժողովի որոշմամբ 3000 հատ 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերը բաժանվել և փոխարկվել են 60,000 հատ 2,500 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերի, այսինքն՝ բաժանումը տեղի է ունեցել 1/20 բաժանման գործակցով:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:**

**ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՍՄԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:**

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊԵՐՈՒՄ:**



## 2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՍՄԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### 2.1. Ընդհանուր տեղեկություններ

**ա.** Թողարկողի կողմից սույն ազդագրի շրջանակում առաջարկվում են անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր:

**բ.** Թողարկողի խորհրդի 2008թ. հունիսի 19-ի թիվ 06-19-01 որոշմամբ պարտատոմսերի թողարկման ընդհանուր ծավալը սահմանվել է 150,000,000 (մեկ հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ, որը նախատեսվում է տեղաբաշխել 1 տրանշով:

**գ.** Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 25,000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ:

**դ.** Թողարկվող արժեթղթերը փոխարկելի չեն:

**ե.** Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսվելու է պարտատոմսերի ազդագրի գրանցման օրվան հաջորդող 5-րդ աշխատանքային օրվանից և տևելու է 10 աշխատանքային օր:

**զ.** Պարտատոմսերի առաջարկի և տեղաբաշխման հետաձգման կամ չեղյալ ճանաչման հանգամանքներ կարող են հանդիսանալ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 20 և 21 հոդվածներով սահմանված հիմքերի առկայությունը: Մասնավորապես՝

1. Եթե տեղաբաշխողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է ազդագրի լրացում, որը կապված է ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավորվում է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել բաժանորդագրության ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով: Հետգնման պահանջը կարող է ներկայացվել ազդագրի լրացման հրապարակումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում՝ հետգնման պահանջը պետք է տեղաբաշխողին ներկայացվի գրավոր:
2. Տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել ՀՀ կենտրոնական բանկի որոշմամբ այն դեպքերում, եթե՝
  - տեղաբաշխման ընթացքում խախտվել են հրապարակային առաջարկը կարգավորող իրավական ակտերի պահանջները.
  - տեղաբաշխման ընթացքում չեն պահպանվել ազդագրում սահմանված հրապարակային առաջարկի պայմանները.
  - ազդագիրը պարունակում է էական սխալներ եւ ապակոմորոշիչ տեղեկություններ, կամ նրանում էական փաստ է բաց թողնված կամ խեղաթյուրված:Այս դեպքում տեղաբաշխումը կարող է շարունակվել ԿԲ-ի թույլտվությամբ՝ հայտնաբերված խախտումներն ու բացթողումները վերացնելու դեպքում:
3. Տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել նաև տեղաբաշխողի նախաձեռնությամբ՝ առավելագույնը 10 աշխատանքային օրով, եթե առկա է ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությունը: Կասեցման ժամկետի ավարտի պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղաբաշխումը չշարունակվելու դեպքում տեղաբաշխողը պարտավոր է դադարեցնել տեղաբաշխումը եւ ներդրողներին վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները:

Տեղաբաշխումը չեղյալ ճանաչվելու դեպքում ներդրողների գումարները վերադարձվում են տեղաբաշխման չեղյալ ճանաչելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով՝ պարտատոմսերի ձեռք բերման հայտերում (պայմանագրերում) ներդրողների կողմից նշված բանկային հաշիվների վրա փոխանցելու միջոցով:

**է.** Պարտատոմսերի դիմաց վճարումներն ընդունվելու են անկանխիկ եղանակով՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում Թողարկողի անունով բացված 25000130500310 բանկային հաշվին միանվագ կերպով փոխանցումների միջոցով: Ֆիզիկական անձինք պարտատոմսերի ձեռք բերման համար անհրաժեշտ գումարները Բանկ կարող են միանվագ կերպով մուտքագրել նաև կանխիկ եղանակով: Կանխիկ եղանակով գումարները մուտքագրելու դեպքում ներդրողը պարտատոմսերի ձեռք բերման հայտին կից Բանկ է ներկայացնում նաև անձնագրի պատճենը:

Եթե ներդրողների կողմից համապատասխան դրամական միջոցները նշված բանկային հաշվին վճարվել են մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00-ն, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվել են տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը և համապատասխան պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվում է այդ օրվա հաշվարկով:

**ը.** Պարտատոմսերի մարումն իրականացվում է ՀՀ դրամով և անվանական արժեքով: Պարտատոմսերի մարման օր է համարվում տեղաբաշխման սկսման օրվան հաջորդող 18-րդ ամսվա համապատասխան օրը (եթե նշված օրը աշխատանքային օր չէ, ապա դրան հաջորդող աշխատանքային օրը): Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի փակման օր է համարվում պարտատոմսերի մարման օրը, իսկ պարտատոմսերի մարման գումարները վճարվում են պարտատոմսերի սեփականատերերին ռեեստրի փակման օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում: Պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ փակման օրվա ժամը 09:00-ի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Թողարկողը պարտավորվում է մինչև պարտատոմսերի մարման օրը հաշվարկային բանկում բացված հատուկ հաշվի վրա կուտակել պարտատոմսերի մարման համար անհրաժեշտ դրամական միջոցները, ինչպես նաև մինչև պարտատոմսերի մարման օրվան հաջորդող օրը հաշվարկային բանկ ներկայացնել մարման գումարներ ստացող անձանց անհրաժեշտ տվյալները:

Հաշվարկային բանկը մարման գումարները վճարում է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

Սահմանված ժամկետում պարտավորությունները չկատարելու դեպքում Թողարկողը պարտավորվում է վճարել յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար վճարել մարման ենթակա գումարի 0.07%-ի չափով տույժ:

Պարտատոմսերի թողարկման պայմաններով վաղաժամկետ մարում չի նախատեսված:

**թ.** Թողարկվող պարտատոմսերն առանց ապահովման են:

**ժ.** Պարտատոմսերի թողարկման մասին որոշումն ընդունվել է Թողարկողի խորհրդի կողմից՝ 2008թ. հունիսի 19-ի թիվ 06-19-01 որոշմամբ:

## 2.2. Պարտատոմսերի գնի վերաբերյալ տեղեկություններ

Պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվելու է հետևյալ բանաձևով.

$$P = \frac{N}{(1+t * R/m)} * \left\{ c * \sum_{j=1}^n \frac{1}{(1+R)^{j-1}} + \frac{1}{(1+R)^{n-1}} \right\}$$

որտեղ՝

- P – պարտատոմսի հաշվարկված (տեղաբաշխման) գինն է,
- N – պարտատոմսի անվանական արժեքն է,
- R – պարտատոմսի ներդրումային եկամտաբերության կիսամյակային տոկոսադրույքն է,
- t – մինչև տվյալ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակն է,
- m – ընթացիկ կիսամյակում ընդգրկված օրերի քանակն է,
- c – կիսամյակային վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է,
- n – մնացած արժեկտրոնների վճարումների քանակն է, ընդ որում n արժեքը պարտատոմսի շրջանառության ընթացքում փոփոխվում է ըստ նվազման, այսինքն՝ 3-1 միջակայքում:
- j – արժեկտրոնի հերթական համարն է, որը փոփոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարում մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կախված, ընդ որում՝ j արժեքը փոփոխվում է ըստ աճման և ընդունում է 1-n արժեքները (երբ n-ը ընդունում է 1 արժեք, j-ն նույնպես ընդունում է 1 արժեքը):

Պարտատոմսերի տեղաբաշխման 1-ին օրվա ընթացքում պարտատոմսերը տեղաբաշխվում են անվանական արժեքով:

### 2.3. Պարտատոմսերից ստացվող եկամուտների վերաբերյալ տեղեկություններ

Պարտատոմսերի դիմաց նախատեսվում է վճարել արժեկտրոնային եկամուտ՝ տարեկան 12% տոկոսադրույքով: Արժեկտրոնները (տոկոսագումարները) վճարվում են կիսամյակային պարբերականությամբ՝ ՀՀ դրամով, պարտատոմսի անվանական արժեքի 6 տոկոսի չափով:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) վճարվում են պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի փակման օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում՝ ռեեստրի փակման օրեր են համարվում պարտատոմսերի տեղաբաշխման սկսման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ և 18-րդ ամսվա համապատասխան օրերը: Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը)՝ փակման օրվա ժամը 09:00-ի դրությամբ:

Արժեկտրոնները վճարվում են անկանխիկ եղանակով՝ հաշվարկային բանկի կողմից, որը համապատասխան գումարները Թողարկողի հաշվից փոխանցում է սեփականատերերի համապատասխան բանկային հաշիվներին: Որպես հաշվարկային բանկ հանդես է գալու «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն:

Պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում պարտավորությունները չկատարելու դեպքում Թողարկողը պարտավորվում է յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար վճարել մարման ենթակա գումարի 0.07%-ի չափով տույժ:

### 2.4. Սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ

**ա.** Թողարկողի կանոնադրությամբ և պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ պարտատոմսերի թողարկման կամ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանված սահմանափակումներ չկան:

**բ.** Բաժանորդագրությունների նվազագույն մեծություն սահմանված չէ, իսկ առավելագույն մեծությունը սահմանափակված է բաժանորդագրության դրված պարտատոմսերի ծավալով, այն է՝ 125 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով 5,000 հատ պարտատոմս:

### 2.5. Պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցող անձինք

Համաձայն Թողարկողի և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի միջև 16.05.2008թ. կնքված Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման թիվ IB/08-001 պայմանագրի 2.2.5. կետի՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն կազմակերպում է պարտատոմսերի տեղաբաշխումը երաշխավորված եղանակով: Նշված պայմանագրով իրեն վերապահված իրավասության շրջանակներում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն նախատեսում է 25,000,000 մլն ՀՀ դրամ (1,000 հատ) ընդհանուր ծավալով պարտատոմսեր ձեռք բերել՝ երկրորդային շուկայում պարտադիր գնանշումներ կազմակերպելու նկատառումներից ելնելով: Ընդ որում՝ մնացած 125 մլն ՀՀ դրամի (5,000 հատ) պարտատոմսերը «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն տեղաբաշխում է երաշխավորված եղանակով՝ ազատ բաժանորդագրություն կազմակերպելու միջոցով:

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի մասին մանրամասն տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում՝

Ֆիրմային անվանումը	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Կազմակերպական իրավական ձևը	Փակ բաժնետիրական ընկերություն
Փոստային հասցեն և կայքի միջոցները	ՀՀ, ք. Երևան 0010, Խանջյան 13/2, հեռ. 52-95-93, e-mail: <a href="mailto:info@armswissbank.am">info@armswissbank.am</a> , <a href="http://www.armswissbank.am">www.armswissbank.am</a>
Չեռք բերման ծավալը և Պարզևառման չափը	1,000 հատ պարտատոմսեր (պարտատոմսերի ընդհանուր ծավալի 16.6%) + բաժանորդագրությամբ տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի չտեղաբաշխված ծավալ:

<b>Ֆիրմային անվանումը</b>	<b>«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ</b>
	Իր կողմից ձեռք բերվող և բաժանորդագրության դրված պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքի 1.5%-ի չափով (ներառյալ վերը նշված պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման դիմաց նախատեսված վճարները):
<b>Առաջարկվող գինը և քանակը</b>	Տեղաբաշխողի կողմից տեղաբաշխման են ենթակա միայն ազատ բաժանորդագրության դրված 125,000,000 դրամ ընդհանուր ծավալով 5,000 հատ պարտատոմսերը, որոնց գինը որոշվում է սույն ազդագրի 2.2. կետում նշված բանաձևով:

## 2.6. Բաժանորդագրությունների վերաբերյալ տեղեկություններ

**ա.** Հաշվի առնելով այն, որ Թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում են 1 տրանշով և պարտատոմսերի ընդհանուր ծավալի 16.6%-ը (1,000 հատ պարտատոմսերը) ձեռք է բերվում տեղաբաշխողի կողմից, բաց բաժանորդագրության եղանակով նախատեսվում է տեղաբաշխել մնացած 5,000 հատ պարտատոմսերը՝ 125 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով:

Հիմք ընդունելով Թողարկողի և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի միջև 16.05.2008թ. կնքված Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման թիվ IB/08-001 պայմանագրի 2.2.5. կետը՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից (Գործադիր տնօրենի 01.07.2008թ. թիվ 192 Լ հրաման) հաստատվել է «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմսերի բաժանորդագրության ընթացակարգը, որը ներկայացվում է որպես սույն ազդագրի Հավելված:

Բաժանորդագրությունը սկսվում է պարտատոմսերի ազդագրի գրանցման օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրվանից և տևելու է 10 աշխատանքային օր:

Պարտատոմսերի բաժանորդագրությունն իրականացնում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն: Ներդրողները կարող են ազդագիրը ստանալ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գտնվելու վայրից (հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Խանջյան 13/2), նրա ինտերնետային կայքից ([www.armswissbank.am](http://www.armswissbank.am)), ինչպես նաև Թողարկողի գտնվելու վայրից (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի 58, բն. 1):

Ներդրողները բաժանորդագրության միջոցով կարող են պարտատոմս ձեռքբերել՝ Բաժանորդագրության ընթացակարգին կից հաստատված հայտը սահմանված կարգով լրացնելու և Բանկին ներկայացնելու միջոցով: Ներդրողների կողմից հայտերը կարող են ներկայացվել տեղաբաշխման ժամկետի ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում՝ ժամը 10:00-17:00:

Եթե տեղի է ունեցել պարտատոմսերի գերբաժանորդագրություն, ապա ներկայացված հայտերը բավարարվում են առաջնահերթության սկզբունքով, իսկ եթե տեղաբաշխման որևէ օրվա ընթացքում ներկայացված հայտերում ձեռքբերվող պարտատոմսերի ծավալը գերազանցում է տվյալ օրվա ընթացքում չվաճառված պարտատոմսերի ծավալը, ապա՝ մասնակիորեն՝ ըստ ներկայացված քանակների կազմված համամասնության: Ընդ որում՝ եթե առաջանում են ոչ ամբողջական պարտատոմսեր, ապա դրանք ենթակա են կտրացման թվաքանակի կտրացման եղանակով: Չբավարարված պարտատոմսերի համապատասխան դրամական միջոցները «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից ենթակա են վերադարձման երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով (պարտատոմսերի ձեռք բերման հայտերում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):

**բ.** Ներդրողները պարտատոմսերի հայտերը մուտքագրելուց հետո 9 ժամվա ընթացքում (աշխատանքային ժամերին) կարող են գրավոր կերպով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ից ամբողջությամբ կամ մասնակի հետկանչել իրենց բաժանորդագրությունները՝ եթե մինչև այդ ներդրողների հայտերը չեն բավարարվել և տվյալ հայտերի հիման վրա գործարքներ չեն կատարվել:

**գ.** Եթե ներդրողի կողմից բաժանորդագրությունը հետ է կանչվում մասնակիորեն, ապա նախկինում ներկայացված հայտը համարվում է անվավեր և ներկայացվում է նոր հայտ:

Հայտի ամբողջությամբ կամ մասնակի հետկանչման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա հայտի հետկանչման ամսաթվից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից ենթակա է

վերադարձման՝ անկանխիկ եղանակով (պարտատոմսերի ձեռք բերման հայտերում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):

## 2.7. Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի նկարագիրը

Պարտատոմսերում ներդրում կատարող անձը եկամուտ կարող է ստանալ հետևյալ դեպքերում՝

- պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից,
- մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (կապիտալի հավելում):

Թողարկողի պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտահարկով (ֆիզիկական անձանց համար):

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում ՀՀ-ում ստեղծված կազմակերպությունները և ոչ ռեզիդենտները (օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները եւ դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները): Ընդ որում՝ վերջիններիս համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկի գումարը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 20 տոկոս դրույքաչափով:

Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար շահութահարկը հաշվարկվում է այլ դրույքաչափով: Այսպես՝ եթե ոչ ռեզիդենտը հայաստանյան աղբյուրներից ստանում է պասիվ եկամուտներ (տոկոսներ, կապիտալի հավելում և այլն), ապա նրա հարկային գործակալը պարտավոր է գանձել շահութահարկ՝ 10 տոկոս դրույքաչափով:

ՀՀ-ում եկամտահարկ են վճարում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում՝ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է: Պարտատոմսերից ստացված եկամուտները՝ կապիտալի հավելումից, ենթակա չեն հարկման, իսկ տոկոսները հաշվառվում են համախառն եկամտում և հարկվում են 10 տոկոս դրույքաչափով:

Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց, ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար որպես հարկային գործակալ հանդես է գալիս Թողարկողը:

## 2.8. Պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները

Պարտատոմսերի ձեռք բերմամբ պարտատոմսերի սեփականատերերը ստանում են հետևյալ իրավունքները.

1. Սույն ազդագրի 2.1. կետի ը) ենթակետում և 2.3. կետում նշված ժամկետներում ստանալ պարտատոմսով նախատեսված արժեկտրոնները և անվանական արժեքը:
2. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնների և/կամ մարման գումարը սույն ազդագրով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում Թողարկողից ստանալ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար մարման ենթակա գումարի 0.07%-ի չափով տույժ:
3. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ:
4. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սույն ազդագրով սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով (սնանկ ճանաչվելու արդյունքում) դատական կարգով լուծարման դեպքում օգտվել օրենքով պարտատիրոջ իրեն վերապահված իրավունքներից:

5. Իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը կարգավորված շուկայում (ֆոնդային բորսայում ցուցակված լինելու դեպքում) կամ դրանից դուրս՝ օրենքով սահմանված կարգով:
6. Օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:
7. Օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

Պարտատոմսերի ձեռք բերմամբ սեփականատերերը պարտավորվում են ստանձնել հետևյալ պարտավորությունները՝

1. Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված պահառուի մոտ բացել արժեթղթերի անձնական հաշիվ:
2. Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը որևէ բանկում բացել բանկային հաշիվ:
3. Կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն:

## **2.9. Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումը**

Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն իրականացնելու է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ն: Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Մ.Սկրտչյան 5բ, հեռ.՝ (+374 10) 566-446, 520-978, [www.cda.am](http://www.cda.am):

Բացի «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից, պարտատոմսերի սեփականատերերը կարող են այդ պարտատոմսերի իրավունքներն ու պարտավորությունները հաշվառել նաև օրենքով սահմանված կարգով լիցենզավորված այլ պահառուի մոտ՝ համապատասխան արժեթղթերի հաշիվ բացելու միջոցով: Պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է ՀՀ օրենսդրությամբ և պահառուի ներքին կանոնակարգերով սահմանված կարգով:

## **2.10. Տեղեկություններ շուկա ստեղծողի վերաբերյալ**

Թողարկողի և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի միջև 16.05.2008թ. կնքված Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման թիվ IB/08-001 պայմանագրի 2.6. կետի համաձայն պարտատոմսերի իրացվելության ապահովման նպատակով ՀՖԲ-ում պարտատոմսերով առևտրի ընթացքում ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը հանդես է գալու որպես շուկա ստեղծող՝ ՀՖԲ-ի կանոններով սահմանված կարգով:

## **2.11. Թողարկման նպատակը**

Պարտատոմսերը թողարկվում են Թողարկողի կողմից վարկերի տրամադրման համար ֆինանսական ռեսուրսների համալրման նպատակով:

### 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### 3.1. Ընդհանուր տեղեկություններ

##### 3.1.1. Թողարկողի պատմությունը և զարգացումը

ա. Թողարկողի ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Էքսպրես Կրեդիտ ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերություն

կրճատ՝ «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ

ռուսերեն լրիվ՝ Акционерное Общество Закрытого Типа "Экспресс Кредит универсальная кредитная организация"

կրճատ՝ АОЗТ "Экспресс Кредит УКО"

անգլերեն լրիվ՝ «Express Credit univesal credit organisation» Joint Stock Company

կրճատ՝

«Express Credit UCO» JSC

բ. Թողարկողի կազմակերպական-իրավական ձևը փակ բաժնետիրական ընկերությունն է: Թողարկողը գրանցվել է 09.12.1997թ.՝ որպես «Ֆինար» փակ բաժնետիրական ընկերություն: «Ֆինար» ՓԲԸ-ի 27.02.2002թ. բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից որոշում է կայացվել վերանվանել ընկերությունը որպես «Էքսպրես Կրեդիտ» փակ բաժնետիրական ընկերություն: «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ վարկային կազմակերպությունների գործունեությունը լիցենզավորված գործունեություն դառնալու պահանջի հիման վրա «Էքսպրես Կրեդիտ» փակ բաժնետիրական ընկերությունը «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով 11.02.2003թ. ՀՀ կենտրոնական բանկում վերագրանցվել է որպես վարկային կազմակերպություն՝ ստանալով «Էքսպրես Կրեդիտ ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերություն անվանումը: 11.02.2003թ.-ից մինչև ազդագրի ներկայացման պահը Թողարկողի անվանափոխության կամ վերակազմակերպման դեպք չի գրանցվել:

գ. Թողարկողի պետական գրանցման վկայականի առաջին գրանցման ամսաթիվն է 09.12.1997թ., գրանցման համարն է՝ 264.120.04041, իսկ գրանցման վկայականի սերիան և համարն է 02Ա 0493253: Գրանցող երկիրը Հայաստանի Հանրապետությունն է, գրանցման վայրը՝ Երևանը: Թողարկողը փաստացի գործունեություն է իրականացնում 1998 թվականից: Թողարկողը, որպես վարկային կազմակերպություն, 11.02.2003թ. գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում՝ ստանալով թիվ 1 գրանցման վկայականը:

##### 3.1.2. Տեղեկություններ ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ

Թողարկողը արդյունաբերական, բանկային, ֆինանսական խմբերի, հողի դեղերի, կոնցեռնների և միությունների մաս չի կազմում:

##### 3.1.3. Թողարկողի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները

Թողարկողը չունի առանձնացված մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

##### 3.1.4. Թողարկողի աուդիտը իրականացնող անձինք

ա. Թողարկողի 2005-2007թթ. ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներին և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան կազմված ֆինանսական հաշվետվությունների

---

3 «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով 11.02.2003թ. ՀՀ կենտրոնական բանկում վերագրանցման արդյունքում Թողարկողին տրվել է թիվ 1 գրանցման վկայականը:

ատոլիտն իրականացվել է «Ատոլիտ Սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից, որի տվյալներն են.

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գազար Փարպեցի 15/4,  
 Հեռ.՝ 53 26 53,  
 Էլ. փոստ՝ [auditser@arminco.am](mailto:auditser@arminco.am),  
 Տնային էջ՝ [www.auditservice.am](http://www.auditservice.am):

**բ.** Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին երեք տարիների ընթացքում Թողարկողի ատոլիտն իրականացրած անձանց կողմից աշխատանքից հրաժարման, վերընտրությանը չմասնակցելու, աշխատանքից հեռացման դեպքեր չեն եղել:

**3.1.5. Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները**

**ա.** Ազդագրում փորձագետների կամ խորհրդատուների կողմից տրված կարծիքներ չկան:

Թողարկողին պարտատոմսերի թողարկման նախապատրաստման, այդ թվում՝ պարտատոմսերի ազդագրի կազմման հարցերում խորհրդատվական ծառայություններ է մատուցել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն՝ համաձայն 16.05.2008թ. կնքված IB/08-001 պայմանագրի:

**բ.** Ազդագրում երրորդ անձանցից ձեռքբերված տեղեկություններ ներառված չեն, բացառությամբ Թողարկողի գործունեության վերաբերյալ տեղեկությունների գլխում բանկերի և վարկային կազմակերպությունների վերաբերյալ ներկայացված վիճակագրական տվյալների, որոնցում օգտագործվել են նաև ԱՐՄԻՆՖՈ տեղեկատվական գործակալության կողմից հրապարակված տեղեկություններ:

**3.1.6. Տեղեկություններ երաշխավորողի վերաբերյալ**

Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունները որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից երաշխավորված չեն:

**3.1.7. Կանոնադրական կապիտալը**

Թողարկողի կանոնադրական կապիտալը կազմում է 155,000,000 (հարյուր հիսունհինգ միլիոն) ՀՀ դրամ, որը Թողարկողի բաժնետերերի կողմից ամբողջությամբ վճարված է: Կանոնադրական կապիտալը կազմված է 60,000 (վաթսույն հազար) հատ 2,500 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական անվանական բաժնետոմսերից և 2,000 (երկու հազար) հատ 2,500 ՀՀ դրամ անվանական արժեքով արտոնյալ բաժնետոմսերից: Թողարկողը ներկայումս կանոնադրական կապիտալի մեծացման մտադրություններ չունի: 2005-2007թթ. յուրաքանչյուր տարվա սկզբի և վերջի դրությամբ չվճարված բաժնետոմսեր չեն եղել:

Թողարկողի կանոնադրական կապիտալը ՀՀ կենտրոնական բանկում որպես վարկային կազմակերպություն գրանցվելու պահին կազմել է 130,000,000 ՀՀ դրամ և բաղկացած է եղել 260 հատ 500,000 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերից: Կանոնադրական կապիտալի և բաժնետոմսերի անվանական արժեքների հետագա փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

N	Փոփոխության գրանցման ամսաթիվը	Կան. կապ. մեծությունը (ՀՀ դրամ)	Բաժնետոմսերի քանակը	Փոփոխության հիմքը
1.	Գրանցված 28.04.2003թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից	130,000,000 ՀՀ դրամ	2,600 հատ սովորական բաժնետոմսեր	Փոփոխությունը հաստատվել է 19.03.2003թ. բաժնետերերի ժողովի որոշմամբ, համաձայն որի 260 հատ 500,000 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերը փոխարկվել են 2,600 հատ 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերի:



2.	Գրանցված 28.04.2003թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից	148,000,000 ՀՀ դրամ	2,960 հատ սովորական բաժնետոմսեր	Փոփոխությունը հաստատվել է 19.03.2003թ. բաժնետերերի ժողովի մեկ այլ որոշմամբ՝ համաձայն որի թողարկվել և տեղաբաշխվել է 360 հատ 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով լրացուցիչ սովորական բաժնետոմսեր, որը ձեռք է բերվել այդ պահին միակ բաժնետեր հանդիսացող քաղաքացի Արմեն Արզումանյանի կողմից:
3.	Գրանցված 04.09.2003թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից	150,000,000	3,000 հատ սովորական բաժնետոմսեր	Փոփոխությունը հաստատվել է 29.07.2003թ. բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ համաձայն որի թողարկվել և տեղաբաշխվել է 40 հատ 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով լրացուցիչ սովորական բաժնետոմսեր, որը ձեռք է բերվել այդ պահին միակ բաժնետեր հանդիսացող քաղաքացի Արմեն Արզումանյանի կողմից:
4.	Գրանցված 10.12.2004թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից	150,000,000 ՀՀ դրամ	60,000 հատ սովորական բաժնետոմսեր	Փոփոխությունը հաստատվել է 30.11.2004թ. բաժնետերերի ժողովի որոշմամբ, համաձայն որի 3000 հատ 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերը փոխարկվել են 60.000 հատ 2,500 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերի:
5.	Գրանցված 30.12.2004թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից	155,000,000 ՀՀ դրամ	60,000 հատ սովորական և 2,000 հատ արտոնյալ բաժնետոմսեր	Փոփոխությունը հաստատվել է 14.12.2004թ. բաժնետերերի ժողովի որոշմամբ, համաձայն որի թողարկվել և տեղաբաշխվել է 2,000 հատ 2,500 ՀՀ դրամ անվանական արժեքով արտոնյալ բաժնետոմսեր:

### 3.2. Տեղեկություններ Թողարկողի գործունեության վերաբերյալ

#### 3.2.1. Ռիսկային գործոններ

Թողարկողի պարտատոմսերում կատարվող ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ, որոնց ի հայտ գալը կարող է նշանակալից կամ էական բացասական ազդեցություն ունենալ Թողարկողի գործառնությունների, ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա: Սա իր հերթին կարող է հանգեցնել տվյալ պարտատոմսերի շուկայական գնի և ներդրումային որակի համապատասխան նվազեցման: Հետևաբար, մինչև սույն ազդագրի շրջանակում առաջարկվող պարտատոմսերում ներդրումներ կատարելը (մինչև պարտատոմսեր գնելու մասին որոշում կայացնելը), ներդրողներին խորհուրդ է տրվում մանրակրկիտ կերպով ուսումնասիրել սույն ազդագրում գետեղված տեղեկությունները և, անհրաժեշտության դեպքում, ռիսկերի ճիշտ գնահատման նպատակով խորհրդակցել խորհրդատուների հետ:

Ստորև ներկայացվում են պարտատոմսերում կատարվող ներդրումների և Թողարկողի գործունեության հետ կապված ռիսկերի նկարագիրը, որոնք սակայն չեն կարող համարվել ամբողջական և ներառել բոլոր հնարավոր ապագա զարգացումները, որոնք ազդեցություն կունենան պարտատոմսերի գների և ռիսկայնության մակարդակի վրա:

- Թողարկողի գործունեության վրա էապես կարող են ազդել բոլոր տեսակի իրադարձությունները, որոնք կհանգեցնեն Թողարկողի վարկառուների կողմից

պայմանագրային պարտավորությունների չկատարմանը: Դա կարտահայտվի Թողարկողի կողմից վնասների ստացմամբ և շահույթի նախատեսված ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարությամբ:

- Վարկային կազմակերպությունների գործունեության ոլորտում պետական կարգավորման հնարավոր փոփոխությունները կարող են էապես ազդել Թողարկողի գործունեության վրա և բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա:
- ՀՀ-ում վարկավորման շուկան խիստ մրցակցային է, շուկայում գործում են բանկեր և այլ վարկային կազմակերպություններ, որոնց գերակշիռ մասն ունեն ավելի մեծ նյութական և ֆինանսական կարողություններ: Այդ պատճառով Թողարկողը չի կարող երաշխավորել նախատեսված շահույթի ստացումը և այն, որ ապագայում Թողարկողը հնարավորություն կունենա իրականացնել հեռանկարային զարգացման ծրագրեր և զգալի ընդլայնել իր գործունեությունը:
- Բարձրորակ մասնագետների առկայությունը Թողարկողի աշխատակազմում շատ կարևոր է մրցունակ լինելու և պլանավորված աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Նման մասնագետների նկատմամբ մեծ պահանջարկի առկայության պատճառով, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ բոլոր առանձնահատուկ կարևոր աշխատողները ապագայում միշտ կմնան Թողարկողի աշխատակազմում:
- ՀՀ ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույքների տատանումները կարող են բացասաբար ազդել պարտատոմսերի շահութաբերության ցուցանիշների վրա: Նույնը վերաբերվում է նաև ՀՀ դրամի փոխարժեքի տատանումներին, քանզի Թողարկողը փոխառություններ է ներգրավում նաև ԱՄՆ դոլարով: Ընդհանուր առմամբ, սղաճի ավելացմանը նպաստող բոլոր տեսակի գործոնները կարող են նվազեցնել պարտատոմսերի ներդրումային որակը:
- ՀՀ-ում կորպորատիվ պարտատոմսերի շուկան դեռևս գտնվում է կազմավորման փուլում, և բացակայում է այս գործիքների ակտիվ երկրորդային շուկան: Հետևապես, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ իր կողմից թողարկված պարտատոմսերը ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել իրենց համար շահավետ գնով: Իրացվելության ռիսկի աստիճանը նվազեցնելու նպատակով Թողարկողի կողմից պարտատոմսերը կցուցակվեն ֆոնդային բորսայում և այդ պարտատոմսերով ֆոնդային բորսայում կկատարվեն պարտադիր գնանշումներ:


Ելնելով ՀՀ-ում տնտեսական և քաղաքական զարգացումներից, հաշվի առնելով ֆինանսական համակարգի զարգացման ներկա վիճակը, Թողարկողի գործելակերպը, Թողարկող-Հաճախորդ գործարար հարաբերությունների ներկայիս դրսևորումները, ինչպես նաև այն, որ ՀՀ կենտրոնական բանկը հստակ կանոնակարգել է և խիստ հսկողություն է իրականացնում վարկային կազմակերպությունների գործունեության նկատմամբ, ներառյալ ռիսկերի վաղ հայտնաբերման գործում, Թողարկողի գործունեության հետ առնչվող ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը էապես փոքրանում է:

### **3.2.2. Թողարկողի գործունեության հիմնական ոլորտների նկարագիրը**

**ա.** Որպես վարկային կազմակերպություն՝ Թողարկողի հիմնական գործունեությունը կենտրոնացված է ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկային ծառայությունների մատուցման ոլորտում: Այս բնագավառում հիմնական մասնակիցները հանդիսանում են առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները: Վերջին տարիներին այս ոլորտը դինամիկ զարգացում է ապրում: Դա պայմանավորված է ինչպես երկրում տնտեսության գործարար ակտիվությամբ և տնային տնտեսությունների մոտ կայուն եկամտների ձևավորմամբ, այնպես էլ վարկային ռեսուրսների մատչելիությամբ: Որպես վերջինիս ապացույց կարելի է փաստել առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի ծավալների միտումները: Ստորև ներկայացված գծապատկերում բերված են

առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից կատարված վարկային ներդրումների ծավալները 2005-2007թթ. ժամանակահատվածում<sup>4</sup>:


**Բանկերի և վարկային կազմակերպությունների վարկային ներդրումները 2005-2007թթ.**



Գծապատկերի վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին 3 տարիների ընթացքում արձանագրվում է ընդհանուր վարկային ներդրումների աճ, թեպետ հիմնական վարկային ներդրումները բաժին են ընկնում առևտրային բանկերին (31.12.2007թ. դրությամբ ընդհանուր վարկային ներդրումներում նրանց բաժինը կազմում է շուրջ 92%), սակայն պետք արձանագրել, որ վարկային կազմակերպությունների կողմից կատարված վարկային ներդրումների տեսակարար կշիռը տարեց տարի նույնպես գրանցում է աճի միտում, մասնավորապես՝ 31.12.2006թ. և 31.12.2007թ. դրությամբ վարկային ներդրումները ընդհանուր վարկային ներդրումներում կազմում են համապատասխանաբար շուրջ 6.25% և 8%:

Ստորև բերված գծապատկերում ներկայացված են 31.12.2005թ. դրությամբ վարկային ներդրումների համեմատությամբ 31.12.2006թ. և 31.12.2007թ. դրությամբ վարկային ներդրումների աճի միտումները:

**Վարկային ներդրումների աճի միտումները**



Վերջին 3 տարիների ընթացքում զգալի է վարկային կազմակերպությունների կողմից կատարված վարկային ներդրումների ծավալի աճը, մասնավորապես՝ 31.12.2007թ. 31.12.2005թ. և 31.12.2006թ. համեմատությամբ այն կազմել է համապատասխանաբար 631.9% և 231.8%:

<sup>4</sup> Ազրագրում ներկայացված բանկերի և վարկային կազմակերպությունների վերաբերյալ վիճակագրական տվյալներում օգտագործվել են նաև ԱՐՄԻՆՖՈ տեղեկատվական գործակալության կողմից հրատարակված տեղեկություններ:

Վարկային ներդրումների աճի միտումները մոտ ապագայում նույնպես կպահպանվեն, որը պայմանավորված է տնտեսությունում գործարար ակտիվության բարձր մակարդակով և ազգաբնակչության կողմից մասսայական վարկային ծառայություններից օգտվելու հանգամանքներով:


**բ.** Թողարկողի կողմից առաջարկվում են սպառողական վարկեր ֆիզիկական անձանց և բիզնես վարկեր իրավաբանական անձանց (անհատ ձեռնարկատերերին): Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարիների ընթացքում Թողարկողի կողմից տրամադրված գրեթե բոլոր վարկերը սպառողական վարկեր են: Վարկերը տրամադրվում են մինչև 5 տարի մարման ժամկետով:

Թողարկողն առաջարկում է հետևյալ տեսակի սպառողական վարկեր՝

- անշարժ գույքի գրավով ապահովված սպառողական վարկեր,
- ֆիզիկական անձանց (որոնք ունեն կայուն եկամուտներ) երաշխավորությամբ ապահովված սպառողական վարկեր:

Թողարկողի վարկային պորտֆելի գերակշիռ մաս կազմող վարկերն անշարժ գույքով ապահովված սպառողական վարկերն են (Թողարկողի կողմից տրամադրված բիզնես վարկերը էական տոկոս չեն կազմում):

Գծապատկերում բերված են ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին երեք տարիների և 2008 թվականի առաջին եռամսյակի վերջին օրվա դրությամբ Թողարկողի վարկային պորտֆելի ծավալները<sup>5</sup>:



Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին երեք տարիների ընթացքում Թողարկողի կողմից տրամադրված վարկերի և մարված ծավալների վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

	2005թ.	2006թ.	2007թ.
Տրամադրված վարկերի ծավալները (հազ. դրամ)	1,127,491	1,385,604	966,893
Մարված վարկերի ծավալները (հազ. դրամ)	549,337	1,080,505	893,385

Թողարկողի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքները սահմանվում են շուկայական եղանակով՝ հաշվի առնելով շուկայում առկա առաջարկի և պահանջարկի գործոնը: Անհրաժեշտ է փաստել, որ հայաստանյան շուկայում վերջին տարիների ընթացքում գրանցվել է տոկոսադրույքների նվազում, ինչը մասամբ պայմանավորված է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսադրույքի նվազեցմամբ: Վերջինս ազդում է նաև Թողարկողի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքների վրա: Մասնավորապես՝ 2005, 2006 և 2007 թվականների ընթացքում Թողարկողի կողմից տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքները կազմել են համապատասխանաբար՝ 33%, 26% և 25%: Ազդագրի գրանցման ներկայացման պահին Թողարկողի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքի առավելագույն չափը կազմում է 22%:

<sup>5</sup> Նշված ծավալներում ներառված չեն Թողարկողի կողմից դուրս գրված վարկերը:

Ստորև ներկայացվում է Թողարկողի վարկային պորտֆելի միջին օրական մեծությունը և միջին եկամտաբերությունը.

	Յուսանիշ	2005թ.	2006թ.	2007թ.
1.	Վարկային պորտֆելի միջին օրական ծավալ (ՀՀ դրամ)	774,546,000	1,069,472,725	1,190,696,885
2.	Վարկային պորտֆելի եկամտաբերություն (%)	32.9%	31.0%	27.1%

Վարկերի տրամադրման ընթացքում բացի տոկոսային եկամուտներից Թողարկողը վարկառուներից գանձում է նաև վարկային հաշիվների և սպասարկման կոմիսիոն վճար, որի չափը կախված է վարկի տրամադրման ժամկետից, մասնավորապես՝ Թողարկողի գործադիր տնօրենի 08.05.2008թ. թիվ 05-08-01 հրամանով սահմանված են հետևյալ սակագները՝

1. Մինչև 1 տարի մարման ժամկետ ունեցող վարկերի համար՝ 1.5%,
2. 13-24 ամիս մարման ժամկետ ունեցող վարկերի համար՝ 2%,
3. 25-36 ամիս մարման ժամկետ ունեցող վարկերի համար՝ 2.5%,
4. 37-48 ամիս մարման ժամկետ ունեցող վարկերի համար՝ 3%,
5. 49-60 ամիս մարման ժամկետ ունեցող վարկերի համար՝ 3.5%:

Բացի այդ, Թողարկողի կողմից սահմանված է առանձին կոմիսիոն վճար նաև արտահերթ կերպով վարկի ստացման համար՝ 1%-ի չափով, սակայն գործնականում վարկառուները չեն օգտվում նշված ծառայությունից:

Թողարկողն իր գործունեությունն իրականացնում է իր կողմից հաստատված Վարկային դիմումների ընդունման և քննարկման, Վարկային փաթեթը նախապատրաստելու և Տրամադրված վարկերի նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգերի հիման վրա:

Թողարկողը հետաքրքրություններ ունի ապագայում ծառայություններ մատուցել կապիտալի՝ ինչպես պետական, այնպես էլ կորպորատիվ արժեթղթերի շուկայում, սակայն ներկայումս Թողարկողի կառավարման մարմինների կողմից վերջնական սահմանված չեն համապատասխան նպատակները և գործունեության ուղղությունները: Թողարկողի կողմից համապատասխան որոշում կայացնելու պարագայում միայն հնարավոր կլինի բացահայտել դրա վերաբերյալ այլ մանրամասնություններ:

**գ.** Ինչպես վերևում արդեն նշվել է, Թողարկողն իր ծառայություններն առաջարկում է ներքին շուկայում, մասնավորապես՝ որպես ծառայությունների սպառողներ հանդես են գալիս ֆիզիկական և իրավաբանական անձինք: Ներկայումս վարկառուների գերակշիռ մասը կազմում են ֆիզիկական անձինք, մասնավորապես՝ Թողարկողի վարկային պորտֆելում ընդգրկված վարկերի շուրջ 98%-ը տրամադրվել է ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներին՝ որպես սպառողական վարկեր:

Թողարկողի կողմից կատարված վարկային ներդրումների ծավալը բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից կատարված վարկային ներդրումների ընդհանուր ծավալում աննշան տոկոս է կազմում (31.12.2007թ. դրությամբ այն կազմում է 0.23%), իսկ միայն վարկային կազմակերպությունների կողմից կատարված վարկային ներդրումների ընդհանուր ծավալում այն 31.12.2007թ. դրությամբ կազմում է 2.8%:

Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թողարկողի վարկային պորտֆելը հիմնականում բաղկացած է ֆիզիկական անձանց տրված սպառողական վարկերից, ապա Թողարկողի բաժինը շուկայում ավելի պատկերավոր կդառնա, եթե ուսումնասիրենք ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի շուկան, մասնավորապես՝ առևտրային բանկերի կողմից 31.12.2007թ. դրությամբ ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը կազմում է 207,394,040 հազ. ՀՀ դրամ կամ բանկերի կողմից տրված ընդհանուր վարկերի 48.6%-ը: Ինչ վերաբերվում է վարկային կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի ծավալին, ապա նման տվյալների չտիրապետելու պատճառով հաշվարկներում օգտագործվել են նրանց կողմից տրված վարկերի ընդհանուր ծավալները՝ 38,240,269 հազ. ՀՀ դրամ: Արդյունքում ստացվում է, որ 31.12.2007թ. դրությամբ ֆիզիկական անձանց տրված վարկերի ընդհանուր ծավալում Թողարկողի մասնաբաժինը կազմում է շուրջ 0.44%:

Թողարկողի կողմից ստացվող եկամուտների մասին պատկերացում կազմելու նպատակով ստորև ներկայացված են Թողարկողի կողմից ստացված տոկոսային և այլ գործառնական եկամուտների, ինչպես նաև շահույթի վերաբերյալ տեղեկություններ:

		2005թ.	2006թ.	2007թ.	2008թ. 1-ին եռ.
1.	Տոկոսային եկամուտներ (հազ. դրամ)	288,629	369,904	343,075	99,791
2.	Այլ գործառնական եկամուտներ (հազ. դրամ)	40,536	76,972	146,583	41,574
3.	Շահույթ (հազ. դրամ)	78,020	132,057	268,394	99,515

Թողարկողը մտադիր է ապագայում մեծացնել վարկային պորտֆելը, մասնավորապես՝ 2008 թվականի վերջում ակնկալվում է վարկային պորտֆելի ծավալները հասցնել մինչև 1.4 մլրդ ՀՀ դրամի: Վարկային պորտֆելի ծավալների ավելացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ են հանդիսանալու պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված եկամուտները: Վարկային պորտֆելի ծավալների նման աճն էականորեն չի ազդի վարկային շուկայում Թողարկողի մասնաբաժնի փոփոխության վրա:

**դ.** Որպես Թողարկողի պոտենցիալ մրցակիցներ հանդես են գալիս բոլոր 22 առևտրային բանկերը և 20 վարկային կազմակերպությունները: Սակայն հաշվի առնելով, որ առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները, ելնելով իրենց գործունեության ռազմավարական ուղղություններից, ակտիվ գործունեություն են իրականացնում վարկային շուկայի տարբեր հատվածներում, այդ իսկ պատճառով Թողարկողի հետ նույն սեգմենտում (որպես մասնատիպ վարկերի տրամադրմամբ զբաղվող անձինք) որպես հիմնական մրցակիցներ կարելի է առանձնացնել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ին, «Յունիբանկ» ՓԲԸ-ին, «ԲՏԱ Ինվեստբանկ» ՓԲԸ-ին, «Ինեկո Բանկ» ՓԲԸ-ին, «Պրոկրեդիտ Բանկ» ՓԲԸ-ին, «Նորվիկ» ՈւՎԿ ՓԲԸ-ին, «Գառնի Ինվեստ» ՈւՎԿ ՓԲԸ-ին:

Ստորև ներկայացված են 31.12.2007թ. դրությամբ Թողարկողի հիմնական մրցակիցների կողմից տրված վարկերի վերաբերյալ տեղեկություններ՝

Անվանում	Վարկերի ընդհանուր ծավալ (հազ. դրամ)	Տեսակարար կշիռ (%)	Ֆիզ. անձանց տրված վարկերի ծավալ (հազ. դրամ)	Տեսակարար կշիռ (%)
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ	59,420,442	43.3	24,952,614	42.5
«Յունիբանկ» ՓԲԸ	29,606,104	21.6	17,030,823	29.0
«ԲՏԱ Ինվեստբանկ» ՓԲԸ	12,290,110	8.9	3,215,423	5.5
«Ինեկո Բանկ» ՓԲԸ	20,899,626	15.2	12,440,914	21.2
«Պրոկրեդիտ Բանկ» ՓԲԸ	գործունեություն դեռ չի ծավալել	-	-	-
«Նորվիկ» ՈւՎԿ ՓԲԸ	13,185,220	9.6	Տվյալները բացակայում են	-
<b>Թողարկող</b>	<b>1,086,999</b>	<b>0.8</b>	<b>1,086,999</b>	<b>1.8</b>
«Գառնի Ինվեստ» ՈւՎԿ ՓԲԸ	860,634	0.6	Տվյալները բացակայում են	-

Ապագայում նոր մրցակիցներ ի հայտ գալու վերաբերյալ տեղեկությունների Թողարկողը չի տիրապետում:

**ե.** Ստորև ներկայացված են Թողարկողի կողմից վերջին 3 տարիներին կնքված այն պայմանագրերի պայմանները, որոնց գինը գերազանցում է Թողարկողի ակտիվների հաշվեկշռված արժեքի 5%-ը:

Փոխկապակցված անձանց հետ կնքված մասնատիպ գործարքները ներկայացված են 3.2.6. կետում:

	Անվանումը (անունը, ազգանունը)	Պայմանագրի առարկան	Գինը	Գործողության ժամկետը
<b>2005 թվական</b>				
1.	«Հայրենիք» Ռ-ազմա-Հայրենասիրական Հիմնադրամ 07.02.2005թ. կնքված փոխառության պայմանագիր թիվ 05/05ԷԿ	«Հայրենիք» Ռ-ազմա-Հայրենասիրական Հիմնադրամը 100,000 ԱՄՆ դոլար -գումարի փոխառություն է տրամադրել Թողարկողին	10% տարեկան տոկոսադրույքով	Որպես փոխառության մարման ժամկետ սահմանվել է 07.02.2006թ.-ը:  Պայմանագիրը գործում է մինչև փոխառության, տոկոսների և հնարավոր տուգանքների լրիվ վճարումը:
2.	«Հայրենիք» Ռ-ազմա-Հայրենասիրական Հիմնադրամ 18.02.2005թ. կնքված փոխառության պայմանագիր թիվ 06/05ԷԿ	«Հայրենիք» Ռ-ազմա-Հայրենասիրական Հիմնադրամը 100,000 ԱՄՆ դոլար գումարի փոխառություն է տրամադրել Թողարկողին	10% տարեկան տոկոսադրույքով	Որպես փոխառության մարման ժամկետ սահմանվել է 18.02.2006թ.-ը:  Պայմանագիրը գործում է մինչև փոխառության, տոկոսների և հնարավոր տուգանքների լրիվ վճարումը:
3.	«Անելիք Բանկ» ՍՊԸ 25.02.2005թ. կնքված գլխավոր վարկային պայմանագիր թիվ ՍՄ0360  Մույն պայմանագրի շրջանակում 17.03.2005թ. կնքվել է թիվ 1ՍՄ0360-1 վարկային պայմանագիրը, որը հանդիսանում է Գլխավոր վարկային պայմանագրի անբաժանելի մասը:	«Անելիք Բանկ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով նախատեսվել է Թողարկողին 200,000 ԱՄՆ դոլարի կամ դրան համարժեք դրամի չափով գուգահեռ կամ հաջորդող վարկեր տրամադրել  «Անելիք Բանկ» ՍՊԸ-ն նշված պայմանագրով Թողարկողին տրամադրել է 200,000 ԱՄՆ դոլարի չափով և 24 ամիս ժամկետով վարկային գիծ	Մինչև 24% տարեկան տոկոսադրույքով  16% տարեկան տոկոսադրույքով	Պայմանագիրը գործում է մինչ 25.02.2010թ.:  Պայմանագիրը գործում է մինչ կողմերի ստանձնած պարտավորությունների լրիվ կատարումը:
4.	«Հայրենիք» Ռ-ազմա-Հայրենասիրական Հիմնադրամ 10.12.2005թ. կնքված փոխառության	«Հայրենիք» Ռ-ազմա-Հայրենասիրական Հիմնադրամը 200,000 ԱՄՆ դոլար գումարի փոխառություն է տրամադրել Թողարկողին	9% տարեկան տոկոսադրույքով	Որպես փոխառության մարման ժամկետ սահմանվել է 10.12.2006թ.-ը:  Պայմանագիրը գործում է

	Անվանումը (անունը, ազգանունը)	Պայմանագրի առարկան	Գինը	Գործողության ժամկետը
	պայմանագիր թիվ 37/05ԷԿ			մինչև փոխառության, տոկոսների և հնարավոր տուգանքների լրիվ վճարումը:
5.	«Հայրենիք» Ռ-ազմա-Հայրենասիրական Հիմնադրամ 14.12.2005թ. կնքված փոխառության պայմանագիր թիվ 38/05ԷԿ	«Հայրենիք» Ռ-ազմա-Հայրենասիրական Հիմնադրամը 200,000 ԱՄՆ դոլար գումարի փոխառություն է տրամադրել Թողարկողին	9% տարեկան տոկոսադրույքով	Որպես փոխառության մարման ժամկետ սահմանվել է 14.12.2006թ.-ը: Պայմանագիրը գործում է մինչև փոխառության, տոկոսների և հնարավոր տուգանքների լրիվ վճարումը:
<b>2006 թվական</b>				
6.	«Հայրենիք» Ռ-ազմա-Հայրենասիրական Հիմնադրամ 20.02.2006թ. կնքված փոխառության պայմանագիր թիվ 05/06ԷԿ	«Հայրենիք» Ռ-ազմա-Հայրենասիրական Հիմնադրամը 100,000 ԱՄՆ դոլար գումարի փոխառություն է տրամադրել Թողարկողին	9% տարեկան տոկոսադրույքով	Որպես փոխառության մարման ժամկետ սահմանվել է 20.02.2007թ.-ը: Պայմանագիրը գործում է մինչև փոխառության, տոկոսների և հնարավոր տուգանքների լրիվ վճարումը:
7.	«Անելիք Բանկ» ՍՊԸ 17.03.2006թ. կնքված գլխավոր վարկային պայմանագիր թիվ ՀԳ-0659  Սույն պայմանագրի շրջանակում 31.03.2006թ. կնքվել է թիվ 1ՀԳ-0569-1 վարկային պայմանագիր, որը հանդիսանում է 17.03.2006թ. կնքված թիվ ՀԳ-0659 գլխավոր վարկային պայմանագրի անբաժանելի մասը:	«Անելիք Բանկ» ՍՊԸ-ի կողմից սույն պայմանագրով նախատեսվել է Թողարկողին մինչև 250,000 ԱՄՆ դոլարի կամ դրան համարժեք դրամի չափով վարկային գծի տրամադրում  «Անելիք Բանկ» ՍՊԸ-ն սույն պայմանագրով Թողարկողին տրամադրել է 250,000 ԱՄՆ դոլարի չափով և 24 ամիս ժամկետով վարկային գիծ	Մինչև 24% տարեկան տոկոսադրույքով  16% տարեկան տոկոսադրույքով	Վարկային գծի տրամադրումը նախատեսվել է մինչև 60 ամիս ժամկետով:  Վարկային գիծը տրամադրվել է մինչև 31.03.2008թ.:



	Անվանումը (անունը, ազգանունը)	Պայմանագրի առարկան	Գինը	Գործողության ժամկետը
8.	Գիտության և տեխնոլոգիայի զարգացման հիմնադրամ 06.07.2006թ. կնքված փոխառության թիվ 14/06ԷԿ պայմանագիր	Գիտության և տեխնոլոգիայի զարգացման հիմնադրամը 300,000 ԱՄՆ դոլար գումարի փոխառություն է տրամադրել Թողարկողին	11.5%	Փոխառության մարման ժամկետը սահմանվել է 07.07.2007թ.-ը:  Պայմանագիրը գործում է մինչև փոխառության, տոկոսների և հնարավոր տուգանքների լրիվ վճարումը:
9.	Մարքար Գավուդի Քալանքարյան 24.07.2006թ. կնքված փոխառության թիվ 17/06ԷԿ պայմանագիր	Մարքար Գավուդի Քալանքարյանը 90,000 Եվրո գումարի փոխառություն է տրամադրել Թողարկողին	11% տարեկան տոկոսադրույքով	Փոխառության մարման ժամկետը սահմանվել է 24.07.2007թ.-ը:  Պայմանագիրը գործում է մինչև փոխառության, տոկոսների և հնարավոր տուգանքների լրիվ վճարումը:
10.	Արթուր Գեորգիի Ծատուրյան 24.10.2006թ. կնքված վարկային պայմանագիր թիվ 242/06ԷԿ	Թողարկողը 200,000 ԱՄՆ դոլարի չափով սպառողական վարկ է տրամադրել Արթուր Ծատուրյանին	Տարեկան 14% տոկոսադրույքով	Պայմանագրով վարկի վերադարձման ժամկետը սահմանվել է 24.02.2007թ.-ը:  Պայմանագիրը գործում է մինչև պայմանագրից բխող վարկառուի բոլոր պահանջների բավարարումը:
11.	«Հայրենիք» Ռ-ազմա-Հայրենասիրական Հիմնադրամ 10.12.2006թ. կնքված փոխառության պայմանագիր թիվ 29/06ԷԿ	«Հայրենիք» Ռ-ազմա-Հայրենասիրական Հիմնադրամը 73,182,000 ՀՀ դրամ գումարի փոխառություն է տրամադրել Թողարկողին	9% տարեկան տոկոսադրույքով	Փոխառության մարման ժամկետը սահմանվել է 10.12.2007թ.-ը: 10.12.2007թ. կնքված թիվ 29/06/07ԷԿ պայմանագրով նշված ժամկետը փոփոխվել և սահմանվել է 10.12.2008թ.:

	Անվանումը (անունը, ազգանունը)	Պայմանագրի առարկան	Գինը	Գործողության ժամկետը
				Պայմանագիրը գործում է մինչև փոխառության, տոկոսների և հնարավոր տուգանքների լրիվ վճարումը:
12.	«Հայրենիք» Ռ-ազմա-Հայրենասիրական Հիմնադրամ 14.12.2006թ. կնքված փոխառության պայմանագիր թիվ 30/06ԷԿ	«Հայրենիք» Ռ-ազմա-Հայրենասիրական Հիմնադրամը 72,960,000 ՀՀ դրամ գումարի փոխառություն է տրամադրել Թողարկողին	9% տարեկան տոկոսադրույքով	Փոխառության մարման ժամկետը սահմանվել է 14.12.2007թ.-ը: 14.12.2007թ. կնքված թիվ 30/06/07ԷԿ պայմանագրով նշված ժամկետը փոփոխվել և սահմանվել է 14.12.2008թ.:  Պայմանագիրը գործում է մինչև փոխառության, տոկոսների և հնարավոր տուգանքների լրիվ վճարումը:
13.	«ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈւՎԿ ՓԲԸ 19.12.2006թ. կնքված փոխառության պայմանագիր թիվ 001-06	«ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈւՎԿ ՓԲԸ-ն 80,000,000 ՀՀ դրամ գումարի փոխառություն է տրամադրել Թողարկողին	10% տարեկան տոկոսադրույքով	Որպես փոխառության մարման ժամկետ է սահմանվել 19.01.2007թ.  Պայմանագիրը գործում է մինչև փոխառության, տոկոսների և հնարավոր տուգանքների լրիվ վճարումը:
<b>2007 թվական</b>				
14.	«Հայրենիք» Ռ-ազմա-Հայրենասիրական Հիմնադրամ 07.02.2007թ. կնքված փոխառության պայմանագիր թիվ 04/07ԷԿ	«Հայրենիք» Ռ-ազմա-Հայրենասիրական Հիմնադրամը 107,814,000 ՀՀ դրամ գումարի փոխառություն է տրամադրել Թողարկողին	9% տարեկան տոկոսադրույքով	Փոխառության մարման ժամկետը սահմանվել է 07.02.2008թ.-ը: 07.02.2008թ. կնքված թիվ 04/07/08ԷԿ պայմանագրով նշված ժամկետը փոփոխվել և

	Անվանումը (անունը, ազգանունը)	Պայմանագրի առարկան	Գինը	Գործողության ժամկետը
				սահմանվել է 07.02.2009թ.: Պայմանագիրը գործում է մինչև փոխառության, տոկոսների և հնարավոր տուգանքների լրիվ վճարումը:
15.	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ՓԲԸ 15.03.2007թ. կնքված վարկային գծի պայմանագիր թիվ 048-07\վ	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ՓԲԸ-ն 85 մլն ՀՀ դրամ գումարի չափով վերականգնվող վարկային գիծ է տրամադրել Թողարկողին	15% տարեկան տոկոսադրույքով	Վարկային գիծը մարվում է 16.03.2009թ.-ին: Պայմանագիրը գործում է մինչև վարկային գծով նախատեսված պարտավորությունների կատարման ավարտը:
16.	«ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈւՎԿ ՓԲԸ 19.03.2007թ. կնքված փոխառության պայմանագիր թիվ 003-07	«ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈւՎԿ ՓԲԸ-ն 70,000,000 ՀՀ դրամ գումարի ցպահանջ փոխառություն է տրամադրել Թողարկողին	12% տարեկան տոկոսադրույքով	Պայմանագիրը գործում է մինչև փոխառության, տոկոսների և հնարավոր տուգանքների լրիվ վճարումը:
17.	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ՓԲԸ 18.05.2007թ. կնքված վարկային գծի պայմանագիր թիվ 126-07\վ	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ՓԲԸ-ն 55 մլն ՀՀ դրամ գումարի չափով վերականգնվող վարկային գիծ է տրամադրել Թողարկողին	15% տարեկան տոկոսադրույքով	Վարկային գիծը մարվում է 18.05.2009թ.-ին: Պայմանագիրը գործում է մինչև վարկային գծով նախատեսված պարտավորությունների կատարման ավարտը:
18.	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ՓԲԸ 29.06.2007թ. կնքված վարկային գծի պայմանագիր թիվ 177-07\վ	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ՓԲԸ-ն 120 մլն ՀՀ դրամ գումարի չափով վերականգնվող վարկային գիծ է տրամադրել Թողարկողին	15% տարեկան տոկոսադրույքով	Վարկային գիծը մարվում է 29.06.2009թ.-ին: Պայմանագիրը գործում է մինչև վարկային գծով նախատեսված պարտավորությունների կատարման ավարտը:

	<b>Անվանումը (անունը, ազգանունը)</b>	<b>Պայմանագրի առարկան</b>	<b>Գինը</b>	<b>Գործողության ժամկետը</b>
19.	Գիտության և տեխնոլոգիայի զարգացման հիմնադրամ 06.07.2007թ. կնքված փոխառության թիվ 13/07ԷԿ պայմանագիր	Գիտության և տեխնոլոգիայի զարգացման հիմնադրամը 300,000 ԱՄՆ դոլար գումարի փոխառություն է տրամադրել Թողարկողին	10.6%	Փոխառության մարման ժամկետը սահմանվել է 07.07.2008թ.-ը:  Պայմանագիրը գործում է մինչև փոխառության, տոկոսների և հնարավոր տուգանքների լրիվ վճարումը:
20.	Մարքար Դավուդի Քալանթարյան 24.07.2007թ. կնքված փոխառության թիվ 14/07ԷԿ պայմանագիր	Մարքար Դավուդի Քալանթարյանը 90,000 Եվրո գումարի փոխառություն է տրամադրել Թողարկողին	11% տարեկան տոկոսադրույքով	Փոխառության մարման ժամկետը սահմանվել է 24.01.2008թ.-ը:  Պայմանագիրը գործում է մինչև փոխառության, տոկոսների և հնարավոր տուգանքների լրիվ վճարումը:
<b>2008 թվական</b>				
21.	Մարքար Դավուդի Քալանթարյան 24.01.2008թ. կնքված փոխառության թիվ 01/08ԷԿ	Մարքար Դավուդի Քալանթարյանը 90,000 Եվրո գումարի փոխառություն է տրամադրել Թողարկողին	12% տարեկան տոկոսադրույքով	Փոխառության մարման ժամկետը սահմանվել է 24.01.2009թ.-ը:  Պայմանագիրը գործում է մինչև փոխառության, տոկոսների և հնարավոր տուգանքների լրիվ վճարումը:

**3.2.3. Այն անձանց անվանացանկը, որտեղ թողարկողը, ներառյալ նրա դուստր ընկերությունները, բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր են**

Թողարկողը որևէ անձի բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր չէ:

**3.2.4. Հարկային արտոնությունները**

Թողարկողը հարկային որևէ արտոնությունից չի օգտվում:

**3.2.5. Դատական և իրավական ընթացակարգը**

**ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության** բանկերի և վարկային կազմակերպությունների հարկային տեսչության կողմից 28.04.2008թ-03.06.2008թ. ժամանակահատվածում իրականացված ստուգման արդյունքում, որը նպատակ է ունեցել ստուգել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմինների կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտությունը, 2007թ. հունիսի 3-ին կազմվել է ստուգման թիվ 1038585 ակտը, համաձայն որի Թողարկողի նկատմամբ կիրառվել են շահութահարկի գծով հետևյալ պատասխանատվության միջոցները.

*հազ. դրամ*

Հարկի կամ պարտադիր վճարի տեսակը	Լրացուցիչ գանձման ենթակա հարկի գումար	Հաշվարկված օրական տույժեր	Հաշվարկված տուգանքի գումար	Ընդամենը
Շահութահարկի գծով՝ ըստ հետևյալ տարիների				
2005թ.	180.4	98.8	108.2	<b>387.4</b>
2006թ.	321.2	175.9	192.7	<b>689.8</b>
2007թ.	349.2	21.0	209.5	<b>579.7</b>
<b>Ընդամենը</b>	<b>850.8</b>	<b>295.7</b>	<b>510.4</b>	<b>1656.9</b>

12.03.2007թ.-13.04.2007թ. ժամանակահատվածում իրականացված Թողարկողի գործունեության հերթական ստուգման արդյունքում բացահայտված խախտումների<sup>6</sup> առնչությամբ ՀՀ կենտրոնական բանկի նախագահին իր 30.07.2007թ. թիվ 1/996Ա «Էքսպրես Կրեդիտ ՈւՎԿ» ՓԲԸ նկատմամբ պատասխանատվության միջոց նշանակելու վերաբերյալ» որոշմամբ Թողարկողին նախազգուշացում է հայտարարել՝ խախտումները վերացնելու հանձնարարականով:

Ազդագրի ներկայացման պահի դրությամբ Թողարկողի դեմ կիրառված պատասխանատվության միջոցները (տույժերն ու տուգանքները) ամբողջությամբ կատարված (վճարված) են:

Թողարկողի դեմ որևէ սնանկության (անվճարունակության) կամ լուծարային վարույթի կիրառման նախաձեռնություն չի ցուցաբերվել:

<sup>6</sup> Մույն խախտումները ներառում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ կետի, «Հաշվապահական Հաշվառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 14-րդ հոդվածների, ՀՀ կենտրոնական բանկի 12.10.2004թ. «ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի» և «ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը» նոր խմբագրությամբ հաստատելու մասին թիվ 251Ն որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 35-րդ բաժնի 357 ենթաբաժնի, 15-րդ բաժնի 151, 156 ենթաբաժնիների պահանջների, ՀՀ կենտրոնական բանկի 03.03.2005թ. «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 15-ի (նոր խմբագրությամբ) 9-րդ և 10-րդ կետի պահանջների, 29.03.2005թ. թիվ 142Ն «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի՝ վարկային ռեգիստրի ստեղծման և վարկային ռեգիստրին ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի մասնակցության» կարգի 6-րդ և 29-րդ հոդվածների պահանջների խախտումները:

### 3.2.6. Տեղեկություններ փոխկապակցված գործարքների վերաբերյալ

Ստորև ներկայացված են Թողարկողի կողմից վերջին մեկ տարվա ընթացքում կնքված և գործողության մեջ գտնվող այն փոխկապակցված գործարքների էական պայմանները, որոնց գինը գերազանցում է Թողարկողի ակտիվների հաշվեկշռային արժեքի 1 և ավելի տոկոսը և (կամ) գերազանցում է 2 միլիոն ՀՀ դրամը:

1) 31.07.2003թ. Թողարկողի և Թողարկողի խորհրդի անդամ Արթուր Ծատուրյանի միջև կնքվել է թիվ 42/03ԷԿ վարկային պայմանագիրը, համաձայն որի Թողարկողը Ա. Ծատուրյանին է տրամադրել 5% տարեկան տոկոսադրույքով 11,500,000 ՀՀ դրամի չափով վարկ: Վարկի մարման ժամկետն է 31.07.2008թ.: Վարկի գումարը կազմում է Թողարկողի 2007 թվականի տոկոսային և նմանատիպ եկամուտների 3.4%-ը:

2) 19.04.2004թ. Թողարկողի և Թողարկողի փոխկապակցված անձ հանդիսացող Արմեն Արզումանյանի միջև կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր, համաձայն որի Ա. Արզումանյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Չարենցի 58 շենքի թիվ 1 հացետում գտնվող բնակարանը (1293273 սեփականության իրավունքի վկայական, տրված Անշարժ գույքի Կենտրոն համայնքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 13.04.2004թ.) հանձնվել է Թողարկողի տիրապետմանը և օգտագործմանը: Պայմանագիրը կնքվել է 6 տարի ժամկետով: Վարձակալության արժեքն է տարեկան 3 մլն դրամ (ամսեկան 250,000 դրամ), որը կազմում է Թողարկողի 2007 թվականի տոկոսային և նմանատիպ եկամուտների 0.9%-ը:

3) 26.01.2007թ. Թողարկողի և Թողարկողի փոխկապակցված անձ հանդիսացող Արմեն Արզումանյանի միջև կնքվել է փոխառության թիվ 01/07ԷԿ պայմանագիրը, համաձայն որի Ա. Արզումանյանը 65 մլն դրամ փոխառություն է տրամադրել Թողարկողին, որը մարվել է 26.01.2008թ.: Փոխառությունը տրամադրվել է տարեկան 12% տոկոսադրույքով: Փոխառության գումարը կազմում է Թողարկողի 2007թ. տոկոսային և նմանատիպ եկամուտների 18.9%-ը:

4) 09.03.2007թ. Թողարկողի և Թողարկողի փոխկապակցված անձ հանդիսացող Արմեն Արզումանյանի միջև կնքվել է փոխառության թիվ 05/07ԷԿ պայմանագիրը, համաձայն որի Ա. Արզումանյանը 6,350 հազ. դրամ փոխառություն է տրամադրել Թողարկողին, որը մարվել է 19.03.2007թ.: Փոխառությունը տրամադրվել է տարեկան 12% տոկոսադրույքով: Փոխառության գումարը կազմում է Թողարկողի 2007թ. տոկոսային և նմանատիպ եկամուտների 1.9%-ը:

5) 11.06.2007թ. Թողարկողի և Թողարկողի փոխկապակցված անձ հանդիսացող Արմեն Արզումանյանի միջև կնքվել է փոխառության թիվ 12/07ԷԿ պայմանագիրը, համաձայն որի Ա. Արզումանյանը 78 մլն դրամ փոխառություն է տրամադրել Թողարկողին, որի մարման ժամկետն է 11.06.2008թ.: Փոխառությունը տրամադրվել է տարեկան 12% տոկոսադրույքով: Փոխառության գումարը կազմում է Թողարկողի 2007թ. տոկոսային և նմանատիպ եկամուտների 22.7%-ը:

6) 26.07.2007թ. Թողարկողի և Թողարկողի խորհրդի անդամ Արթուր Ծատուրյանի միջև կնքվել է թիվ 144/07ԷԿ վարկային պայմանագիրը, համաձայն որի Թողարկողը Ա. Ծատուրյանին է տրամադրել 14% տարեկան տոկոսադրույքով 35,000,000 ՀՀ դրամի չափով սպառողական վարկ: Սպառողական վարկի մարման ժամկետն է 26.02.2008թ.: Սակայն 26.02.2008թ. կնքվել է թիվ 144/07ԷԿ վարկային պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր՝ համաձայն որի վարկի մարման ժամկետը վերասահմանվել է 26.02.2010թ., իսկ վարկի տոկոսադրույքը՝ 12%: Վարկի գումարը կազմում է Թողարկողի 2007 թվականի տոկոսային և նմանատիպ եկամուտների 10.2%-ը:

7) 27.07.2007թ. Թողարկողի և Թողարկողի փոխկապակցված անձ հանդիսացող Արմեն Արզումանյանի միջև կնքվել է փոխառության թիվ 15/07ԷԿ պայմանագիրը, համաձայն որի Ա. Արզումանյանը 20 մլն դրամ փոխառություն է տրամադրել Թողարկողին, որի մարման ժամկետն է 27.07.2008թ.: Փոխառությունը տրամադրվել է տարեկան 12% տոկոսադրույքով: Փոխառության գումարը կազմում է Թողարկողի 2007թ. տոկոսային և նմանատիպ եկամուտների 5.8%-ը:

8) 07.08.2007թ. Թողարկողի և Թողարկողի փոխկապակցված անձ հանդիսացող Արմեն Արզումանյանի միջև կնքվել է փոխառության թիվ 16/07ԷԿ պայմանագիրը, համաձայն որի Ա. Արզումանյանը 4 մլն դրամ փոխառություն է տրամադրել Թողարկողին, որի մարման ժամկետն է 07.08.2008թ.: Փոխառությունը տրամադրվել է տարեկան 12% տոկոսադրույքով: Փոխառության գումարը կազմում է Թողարկողի 2007թ. տոկոսային և նմանատիպ եկամուտների 1.2%-ը:

9) 04.02.2008թ. Թողարկողի և Թողարկողի փոխկապակցված անձ հանդիսացող Արմեն Արզումանյանի միջև կնքվել է փոխառության թիվ 02/08ԷԿ պայմանագիրը, համաձայն որի Ա. Արզումանյանը 4 մլն դրամ փոխառություն է տրամադրել Թողարկողին, որի մարման ժամկետն է 04.02.2009թ.: Փոխառությունը տրամադրվել է տարեկան 12% տոկոսադրույքով: Փոխառության գումարը կազմում է Թողարկողի 2007թ. տոկոսային և նմանատիպ եկամուտների 1.2%-ը:

10) 11.01.2008թ. Թողարկողի և Թողարկողի խորհրդի անդամ Արթուր Ծատուրյանի միջև կնքվել է թիվ 03/08ԷԿ վարկային պայմանագիրը, համաձայն որի Թողարկողը Ա. Ծատուրյանին է տրամադրել 18% տարեկան տոկոսադրույքով 9,000,000 ՀՀ դրամի չափով սպառողական վարկ: Սպառողական վարկի մարման ժամկետն է 11.07.2009թ., որը վաղաժամկետ մարվել է: Վարկի գումարը կազմում է Թողարկողի 2007 թվականի տոկոսային և նմանատիպ եկամուտների 2.6%-ը:

**3.2.7. Թողարկողի նախատեսվող գործունեությունը և հեռանկարները**

Թողարկողը մտադիր է ապագայում ընդլայնել իր վարկավորման գործունեությունը, ինչպես նաև ծառայություններ մատուցել կապիտալի (պետական և կորպորատիվ արժեթղթերի) շուկայում: Ապագայում նախատեսվում է եկամուտների ստացում միայն վարկավորման գործառնություններից, քանի որ Թողարկողի կառավարման մարմինների կողմից վերջնական սահմանված չեն կապիտալի շուկայում գործունեություն ծավալելու նպատակները և գործունեության ուղղությունները: Ուստի Թողարկողի կողմից սույն ազդագրի շրջանակում ներկայացված եկամուտների կառուցվածքում չեն ներառվում կապիտալի շուկայում գործառնություններից ստացվող հնարավոր եկամուտները:

Թողարկողի կանխատեսումներով մոտակա 2 տարիներին նախատեսվում է ստանալ հետևյալ եկամուտները՝

- 2008 թվականի ընթացքում՝ շուրջ 460 մլն ՀՀ դրամ, մասնավորապես՝ 2008 թվականի համար նախատեսվում է վարկային պորտֆելի միջին եկամտաբերությունը պահպանել 24%, իսկ վարկային պորտֆելի միջին չափը՝ մինչև 1,250 մլն դրամ:
- 2009 թվականի ընթացքում՝ շուրջ 480 մլն ՀՀ դրամ, մասնավորապես՝ 2009 թվականի համար նախատեսվում է վարկային պորտֆելի միջին եկամտաբերությունը պահպանել 23%, իսկ վարկային պորտֆելի միջին չափը՝ մինչև 1,400 մլն դրամ:

Թողարկողի նույն ժամանակահատվածում կատարվող ծախսերը կարելի է դասակարգել 2 հիմնական խմբերում՝ ֆինանսական և վարչական: Ֆինանսական ծախսերն ընդգրկում են ներգավված միջոցների դիմաց կատարվող տոկոսային ծախսերը, իսկ վարչական ծախսերը՝ աշխատակազմին վճարվող աշխատավարձը և աշխատակազմի պահպանման ծախսերը: Թողարկողի գնահատականներով 2008-2009 թվականներին կկատարվեն հետևյալ ծախսերը՝

- 2008 թվականի ընթացքում՝ 140 մլն դրամ,
- 2009 թվականի ընթացքում՝ 150 մլն դրամ:

**3.3. Տեղեկություններ Թողարկողի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ**

**3.3.1. Ֆինանսական հաշվետվություններ**

Թողարկողի 2005, 2006 և 2007 թվականների տարեկան, ինչպես նաև 2008 թվականի առաջին եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Հավելվածներ բաժնում:

**3.3.2. Տեղեկություններ Ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների փոփոխությունների վերաբերյալ**

Վերջին 3 տարվա համար Թողարկողի զուտ շահույթի մեծությունը ներկայացված է ստորև.

*հազ. դրամ*

	2005թ.	2006թ.	2007թ.
--	--------	--------	--------

Չուտ տոկոսային եկամուտ	225,946	287,492	261,881
Գործառնական եկամուտ <sup>7</sup>	18,100	17,333	368,147
Չուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	103,549	189,861	345,750
Չուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	78,020	132,057	268,394

Թողարկողի զուտ շահույթը կայուն աճի միտում ունի, քանի որ 2005 թվականի համեմատությամբ 2006թ. և 2007թ. զուտ շահույթի աճը կազմել է համապատասխանաբար շուրջ 169.3% և 344%:

Շահույթի աճի նման ցուցանիշները հիմնականում պայմանավորված են Թողարկողի կողմից այլ գործառնական եկամուտների ծավալներով, մասնավորապես՝ 2005 թվականին այն կազմել է 40,536 հազ. դրամ, 2006 թվականին՝ 76,972 հազ. դրամ և 2007 թվականին՝ 146,583 հազ. դրամ: Ընդ որում՝ այլ գործառնական եկամուտների նման աճի հիմնական գործոն են հանդիսացել արտարժույթի փոխարժեքային տարբությունների արդյունքում ստացված եկամուտները, որոնք ի հայտ են եկել ՀՀ-ում այդ տարիներին ԱՄՆ դոլարի արժեզրկման հանգամանքով:

Վերջին 3 տարիների կտրվածքով Թողարկողի եկամտաբերության ցուցանիշները ներկայացված են ստորև.

	2005թ.	2006թ.	2007թ.
Ակտիվների եկամտաբերություն (%)	7.7	11.2	22.6
Սեփական կապիտալի եկամտաբերություն (%)	32.5	44.1	58.9

Ինչպես երևում է աղյուսակից, Թողարկողի եկամտաբերության բոլոր ցուցանիշները 2005-2007թթ.-ին դրսևորել են աճի միտում: Նշված ժամանակահատվածում աճել է ինչպես Թողարկողի զուտ շահույթը, այնպես էլ՝ Թողարկողի մյուս ֆինանսական ցուցանիշները (ակտիվները և սեփական կապիտալը), սակայն զուտ շահույթի բացարձակ աճը եղել է ավելի մեծ, քան մյուս ցուցանիշների բացարձակ աճը, ուստի յուրաքանչյուր տարի աճել է նաև եկամտաբերությունների չափը: Շահույթի նման աճի գործում էական դերակատարում են ունեցել այդ տարիների ընթացքում ստացված այլ գործառնական եկամուտները, որոնք հիմնականում պայմանավորված են արտարժույթի փոխարժեքային տարբություններից ստացված եկամուտների ծավալով:

### 3.3.3. Թողարկողի ֆինանսական գործունեությունը

**ա.** 31.12.2005թ., 31.12.2006թ. և 31.12.2007թ. դրությամբ Թողարկողի ընդհանուր պարտավորությունները կազմել են ակտիվների համապատասխանաբար 76.3%, 74.6% և 61.6%-ը:

Ստորև ներկայացված է Թողարկողի պարտավորությունների կառուցվածքը.

*հազ. դրամ*

	31.12.2005	31.12.2006	31.12.2007
Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	9,004	110,770	13,760
Հաճախորդներից ներգրավված փոխառություններ	711,488	695,537	609,178
Պահուստներ	2,419	218	184

<sup>7</sup> 2005, 2006 թվականների և 2007 թվականի համար նշված ցուցանիշի էական տարբերությունները պայմանավորված են հաշվարկների մեթոդի փոփոխության հանգամանքով, ուստի 2005 և 2006 թվականների ցուցանիշները 2007 թվականի համար հաշվարկված եղանակով հաշվելու դեպքում կստացվեն համապատասխանաբար՝ 244,046 հազ. դրամ և 304,825 հազ. դրամ:



Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	5
Վճարվելիք տոկոսներ	12,524	13,106	14,024
Այլ պարտավորություններ	37,135	62,690	95,767
<b>Ընդամենը՝ պարտավորություններ</b>	<b>772,632</b>	<b>882,321</b>	<b>732,918</b>

Թողարկողի պարտավորությունները 2005-2007թթ. ժամանակահատվածում են ցուցաբերել ոչ օրինաչափ միտումներ, մասնավորապես՝ 2006 թվականին գրացվել է պարտավորությունների աճ, իսկ 2007 թվականի ընթացքում այն նվազել է: 2006 թվականի ընթացքում պարտավորությունների աճը պայմանավորված է եղել Թողարկողի կողմից բանկերից ստացված փոխառությունների և վարկերի ծավալների աճով՝ կազմելով 110,770 հազ. դրամ: Վերջինս 2007 թվականի ընթացքում 87.5%-ով նվազել է՝ կազմելով 13,760 հազ. դրամ: Այդ ժամանակահատվածում Թողարկողի պարտավորությունների հիմնական բաժինը կազմել են հաճախորդներից ստացված փոխառությունները, որոնք ցուցաբերել են նվազման միտում, մասնավորապես՝ 31.12.2005թ.-ի համեմատությամբ 31.12.2007թ.-ին այս ցուցանիշը նվազել է շուրջ 14.5%-ով:

Թողարկողի այլ պարտավորությունները բաղկացած են բացառապես կրեդիտորական պարտքերից: 31.12.2005թ., 31.12.2006թ. և 31.12.2007թ. դրությամբ Թողարկողի կրեդիտորական պարտքերը կազմել են ընդհանուր պարտավորությունների համապատասխանաբար 4.8%, 7.1% և 13.1%-ը: Կրեդիտորական պարտքերի գերակշիռ մասը կազմում են բյուջի գծով կրեդիտորական պարտքերը: Կրեդիտորական պարտքի կառուցվածքում ընդգրկված են նաև կրեդիտորական պարտքերը հաճախորդների նկատմամբ: Թողարկողն իր կրեդիտորական պարտքերի վճարումները նախատեսում է կատարել սահմանված ժամկետներում և չվճարման որևէ հիմք չի տեսնում:

**բ.** 31.12.2005թ.-ի դրությամբ Թողարկողի սեփական կապիտալի մեծությունը կազմել է 240,157 հազ. դրամ, 31.12.2006թ.-ի դրությամբ՝ 299,656 հազ. դրամ և 31.12.2007թ.-ի դրությամբ 455,992 հազ. դրամ:

Թողարկողի սեփական կապիտալի փոփոխությունները պայմանավորված են եղել կուտակված շահույթի աճի ավելացմամբ, մասնավորապես՝ 2006 և 2007 թվականների ընթացքում Թողարկողի գուտ շահույթը կազմել է համապատասխանաբար 132,057 և 268,394 հազ. դրամ, որից համապատասխանաբար վճարվել են շահաբաժիններ՝ 112,057 և 98,394 հազ. դրամի չափով:

Թողարկողի սեփական կապիտալը 2008 թվականի ընթացքում կպահպանի աճի միտումը, որը պայմանավորված կլինի նույնպես 2008 թվականի ընթացքում կուտակվող շահույթի աճի չափով:

### 3.3.4. Շահույթի կանխատեսումը և գնահատումը

*Սույն կետում նշված տեղեկություններն ընդամենը կանխատեսումներ են և ներդրումային որոշումներ կայացնելիս չպետք է հիմնվել դրանց վրա:*

**ա.** Մոտակա տարիների գործունեության և շահույթի կանխատեսումներում Թողարկողը հիմնվել է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

- Թողարկողի գործունեությունը նպատակամղել շահույթի, բաժնետիրական կապիտալի և ակտիվների եկամտաբերության աճին,
- Թողարկողի ռեսուրսները տեղաբաշխել բարձր եկամտաբերություն ունեցող ակտիվներում (վարկեր հաճախորդներին)՝ ընդունելի մակարդակի վրա պահելով ռիսկերը, Թողարկողի գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվները,
- Թողարկողի կողմից ստացվող շահույթի կանխատեսումները կատարել շահույթի վրա ազդող գործոնների (բանկային տոկոսադրույք, փոխարժեք, ավանդների շուկայում տոկոսադրույք և այլն) ապագա միտումների կայունության պայմաններում,
- Թողարկողի ծառայությունների հաստատուն տեսականի,
- Թողարկողի զարգացմանը համահունչ անձնակազմի վարձատրություն, պատրաստում և վերապատրաստում, ինչպես նաև Թողարկողի պահպանման ծախսերի իրականացում:

**բ.** Թողարկողի կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու (կառավարելու) Թողարկողի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.


- Թողարկողի ռիսկերի ընդունելի մակարդակի պահպանում,
- Թողարկողի տեխնիկատեխնոլոգիական և տեղեկատվական ապահովվածության ընդունելի մակարդակի պահպանում, այդ թվում՝ այդ ուղղությամբ կատարվող ներդրումներ,
- անձնակազմի վարձատրության, պատրաստման և վերապատրաստման, ինչպես նաև Թողարկողի պահպանման ծախսեր,
- նոր ծառայությունների ներդրման ուղղությամբ լրացուցիչ ծախսերի ավելացում:
- Թողարկողի կառավարման մարմինները կարող են արձագանքել, սակայն հնարավորություն չունեն ազդելու Թողարկողի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.
- ներգրավող փոխառությունների ու տրամադրվող վարկերի առաջարկի ու պահանջարկի և դրանից բխող տոկոսադրույքների միտումները, հետևաբար՝ մասամբ Թողարկողի ներգրավվող և տեղաբաշխվող միջոցների ծավալները (մրցակցային պայմաններում),
- արժեզրկման ու արտարժույթի փոխարժեքի վարքագիծ,
- անհատթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրության հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները, պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Թողարկողի բնականոն գործունեությունը):

**գ.** Փաստացի 31.03.08թ.–ի դրությամբ զուտ շահույթը կազմել է 99,515 հազ. ՀՀ դրամ: Ազդագրի ներկայացման պահին Թողարկողի կանխատեսումները հանգեցնում են այն ենթադրությանը, որ 2008թ.-ի գործունեության արդյունքներով Թողարկողի զուտ շահույթի մեծությունը կկազմի շուրջ 230,000 հազ. ՀՀ դրամ, իսկ 2009թ-ին՝ 240,000 հազ. ՀՀ դրամ:

### 3.4. Տեղեկություններ Թողարկողի կառավարման մարմինների և կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ

#### 3.4.1. Ընդհանուր տեղեկություններ կառավարման մարմինների վերաբերյալ

**ա.** Թողարկողի կառավարման մարմինների կառուցվածքն ընդհանուր առմամբ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.



Թողարկողի կանոնադրությամբ (6.6. կետով) սահմանվում են **բաժնետերերի ժողովին** պատկանող հետևյալ իրավասությունները՝

- ա) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.
- բ) Թողարկողի վերակազմակերպումը.

- զ) Թողարկողի լուծարումը.
- դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը.
- ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.
- զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.
- է) կանոնադրական կապիտալի փոփոխումը.
- ը) Թողարկողի գործադիր մարմնի ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
- թ) Թողարկողի վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգողի ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Վերստուգողի ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգողի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.
- ժ) Թողարկողի աուդիտը իրականացնող անձի հաստատումը.
- ժա) Թողարկողի տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը:
- ժբ) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան Թողարկողի բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Թողարկողի բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.
- ժգ) Ժողովի վարման կարգի սահմանումը.
- ժդ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.
- ժե) Թողարկողի կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.
- ժզ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.
- ժէ) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.
- ժը) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում.
- ժթ) Թողարկողի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում.
- ի) Թողարկողի ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.
- իա) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.
- իբ) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը.
- իգ) հողինգալին ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը.
- իդ) հողինգալին ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը.
- իե) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և Թողարկողի կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

Թողարկողի կանոնադրությամբ (6.6 կետով) սահմանված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել խորհրդին կամ գործադիր մարմնին, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի:

Թողարկողի կանոնադրությամբ (12.2. կետով) սահմանվում են Թողարկողի **խորհրդին** պատկանող հետևյալ իրավասությունները՝

- ա) Թողարկողի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.
- բ) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերի.
- գ) ժողովների օրակարգի հաստատումը.
- դ) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի X գլխի դրույթներին համապատասխան.
- ե) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ-ի» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը.
- զ) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.
- է) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով.
- ը) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում Թողարկողի տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.
- թ) Թողարկողի վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.
- ժ) Թողարկողի աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.
- ժա) Թողարկողի բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.
- ժբ) Թողարկողի բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամսյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.
- ժգ) Թողարկողի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
- ժդ) Թողարկողի կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.
- ժե) Թողարկողի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.
- ժզ) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.
- ժէ) Թողարկողի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում.
- ժը) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը.
- ժթ) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.
- ի) Թողարկողի հաստիքացուցակի հաստատումը.
- իա) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և Թողարկողի կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել Թողարկողի գործադիր մարմնի լուծմանը:

Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում արտահերթ ժողովի կողմից՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և Թողարկողի կանոնադրությամբ սահմանված կարգով: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո: Խորհրդի նիստում քվորումն ապահովված է համարվում խորհրդի կազմում մտնող անփանց 2/3 ներկայության դեպքում:

Թողարկողի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է Թողարկողի գործադիր մարմնի՝ **գործադիր տնօրենի** կողմից:

Թողարկողի գործադիր մարմնի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը՝ բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և Թողարկողի կանոնադրությամբ ժողովի և խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի: Գործադիր մարմինը կազմակերպում է ժողովի և խորհրդի որոշումների կատարումը:

Թողարկողի գործադիր տնօրենը՝

- ա) տնօրինում է Թողարկողի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.
- բ) ներկայացնում է Թողարկողին Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
- գ) գործում է առանց լիազորագրի.
- դ) տալիս է լիազորագրեր.
- ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
- զ) բանկերում բացում է Թողարկողին հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.
- է) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Թողարկողի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Թողարկողի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.
- ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
- թ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում աշխատակիցներին.
- ժ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար ժողովն ընտրում է **Վերստուգողին**:

Վերստուգողի իրավասությունները և ստուգումների անցկացման կարգը սահմանվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և Թողարկողի կանոնադրությամբ:

Վերստուգողը հետևում է Թողարկողի կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Թողարկողի փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին ու կանոնադրությանը:

Վերստուգողն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև ժողովի կողմից հաստատված ներքին փաստաթղթով՝ վերստուգողի աշխատանքի կանոնակարգով:

Վերստուգողը իրականացնում է Թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, ժողովի կամ խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Թողարկողի՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Վերստուգողն իրավունք ունի պահանջել արտահերթ ժողովի գումարում՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածին համապատասխան:

Վերստուգողի պահանջով նրան պետք է ներկայացվեն Թողարկողի, նրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

Վերստուգողին ընտրում է ժողովը՝ 3 տարի ժամկետով:

**բ.** Ստորև ներկայացված են Թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ տեղեկությունները.

Անուն, Ազգանուն Մասնակցությունը կառավարման մարմիններում	Մասնագիտությունը, բնակության վայրը	Վերջին 3 տարիների ընթացքում զբաղ. պաշտ, այդ թվում համատեղությամբ, ժամանակագրական կարգով՝ նշելով կազմ. անվանումները, որտեղ այդ անձը պաշտոն է զբաղեցրել	Վերջին 3 տարիների ընթացքում Թողարկողի մոտ վարձ. չափը (տարին, գումարը՝ դրամով)	Տվյալ անձին պատկանող Թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը	Մասնակցությունը այլ բաժնային արժեթղթերում	Պայմանագրերը, որոնց համաձայն տվյալ անձը հանդիսանում է Թողարկողի կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետները
<b>Արմեն Արզումանյան</b> Խորհրդի նախագահ, Գործադիր տնօրեն	Տնտեսագետ ՀՀ, ք. Երևան, Աբովյան փող, 11 շենք, բն. 7	2005թ.-ից առ այսօր զբաղեցնում է «Էքսպրես Կրեդիտ ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ-ի Խորհրդի նախագահի և Գործադիր տնօրենի պաշտոնը: Համատեղությամբ չի աշխատում:	2005թ. 1,440.0 հազ. ՀՀ դրամ 2006թ. 1,440.0 հազ. ՀՀ դրամ 2007թ. 2,653.8 հազ. ՀՀ դրամ	Սովորական բաժնետոմսերի 100%-ը Արտոնյալ բաժնետոմսերի 98.85%-ը	-	21.05.2008թ. բաժնետերերի տարեկան ժողովի թիվ 05-21-02 արձանագրություն: Աշխատանքային պայմանագիր N20, կնքված 21.04.2006թ.: Պայմանագիրը կնքված է անորոշ ժամկետով: 02.04.2007թ. կնքվել է 21.04.2006թ. թիվ 24 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին թիվ 20/1 համաձայնագիրը, համաձայն որի վերանայվել է ամսեկան աշխատավարձի չափը:
<b>Արթուր Ծատուրյան</b> Խորհրդի անդամ	Ինժեներ Էլեկտրիկ ՀՀ, ք. Երևան, Գավիթաշեն 4-րդ թաղամաս, 32/25 Նալբանդյան փող., 104 շենք	2005թ.-ից առ այսօր՝ «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ և գլխավոր մասնագետ: Մինչև 31.05.2007թ. զբաղեցրել է նաև գանձապահի պաշտոնը: Համատեղությամբ չի աշխատում:	2005թ.՝ 1,148.0 հազ. ՀՀ դրամ 2006թ.՝ 1,080.0 հազ. ՀՀ դրամ 2007թ.՝ 1,210.0 հազ. ՀՀ դրամ	-	-	21.05.2008թ. բաժնետերերի տարեկան ժողովի թիվ 05-21-02 արձանագրություն: Աշխատանքային պայմանագիր թիվ 12, կնքված է 23.01.2006թ.: Պայմանագիրը կնքված է անորոշ ժամկետով: 02.04.2007թ. և 31.05.2007թ. կնքվել են 23.01.2006թ. թիվ 12 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրեր, որոնցով վերանայվել է աշխատավարձի չափը և հանվել է գանձապահի գործառույթի իրականացումը:

Անուն, Ազգանուն Մասնակցությունը կառավարման մարմիններում	Մասնագիտությունը, բնակության վայրը	Վերջին 3 տարիների ընթացքում գրառ. պաշտ, այդ թվում համատեղությամբ, ժամանակագրական կարգով՝ նշելով կազմ. անվանումները, որտեղ այդ անձը պաշտոն է զբաղեցրել	Վերջին 3 տարիների ընթացքում Թողարկողի մոտ վարձ. չափը (տարին, գումարը՝ դրամով)	Տվյալ անձին պատկանող Թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը	Մասնակցությունը այլ բաժնային արժեթղթերում	Պայմանագրերը, որոնց համաձայն տվյալ անձը հանդիսանում է Թողարկողի կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետները
<b>Ռուզաննա Սահակյան</b> Խորհրդի անդամ, Գլխավոր հաշվապահ	Տնտեսագետ ՀՀ, ք. Երևան, Բագրատունյանց 22 ա, բն. 19	2005թ.-ից առ այսօր զբաղեցնում է «Էքսպրես Կրեդիտ ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ գլխավոր հաշվապահի պաշտոնը: Համատեղությամբ չի աշխատում:	2005թ.՝ 1,080.0 հազ. ՀՀ դրամ, 2006թ.՝ 1,080.0 հազ. ՀՀ դրամ 2007թ.՝ 1,350.0 հազ. ՀՀ դրամ	-	-	21.05.2008թ. բաժնետերերի տարեկան ժողովի թիվ 05-21-02 արձանագրություն: Թիվ 24 աշխատանքային պայմանագիրը կնքված է 01.03.2007թ.՝ անորոշ ժամկետով: 02.04.2007թ. կնքվել է 01.03.2007թ. թիվ 24 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին թիվ 24/1 համաձայնագիրը, համաձայն որի վերանայվել է ամսեկան աշխատավարձի չափը:
<b>Աննա Գարբինյան</b> Վերստուգող	Տնտեսագետ ՀՀ, ք. Երևան, 16 թաղ., 34 շենք, բն. 99	2006թ.-ից առ այսօր զբաղեցնում է «Էքսպրես Կրեդիտ ՈւՎԿ» ՓԲԸ-ի վերստուգողի պաշտոնը՝ հասարակական հիմունքով: 2005թ.-ից առ այսօր միաժամանակ նա զբաղեցնում է «Գլաժոր ՈւՎԿ» ՓԲԸ-ի վերստուգողի պաշտոնը: 2006թ. հոկտեմբերից միաժամանակ հանդիսանում է «Գ-առնի Ինվեստ ՈւՎԿ» ՓԲԸ-ի վերստուգողը:	Հասարակական հիմունքով	-	-	07.02.2006թ. բաժնետերերի արտահերթ ժողովի թիվ 02-07-02 արձանագրություն: Մինչև Աննա Գարբինյանի նշանակումը Թողարկողի վերստուգողի պաշտոնը զբաղեցրել է Սերյոժա Ծատուրյանը:

**գ.** Վերջին երեք տարիների ընթացքում Թողարկողի կառավարմանը մասնակցող անձի դեմ սնանկացման (անվճարունակության) միջնորդությունների ներկայացման, ինչպես նաև դատարանի որոշման (դատավճռի) հիման վրա կամ պետական որևէ մարմնի կողմից նրա նկատմամբ պատասխանատվության միջոցի կիրառման դեպքեր չեն գրանցվել:

**դ.** Կառավարմանը մասնակցող անձանց միջև ազգակցական կապ գոյություն չունի:

**ե.** Թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց միջև շահերի բախում չկա: Թողարկողի և իր կառավարմանը մասնակցող անձաց միջև որպես շահերի բաշխման դեպք կարելի է առանձնացնել հետևյալ դեպքերը՝

1) Թողարկողի և Թողարկողի խորհրդի նախագահ Արմեն Արզումանյանի (միաժամանակ նա հանդիսանում է Թողարկողի գործադիր տնօրեն և խոշոր սեփականատեր) միջև 19.04.2004թ. կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր, համաձայն որի Ա. Արզումանյանին սեփականության իրավունքով պատկանով ք. Երևան, Չարենցի 58 շենքի թիվ 1 հացեռում գտնվող բնակարանը (1293273 սեփականության իրավունքի վկայական, տրված Անշարժ գույքի Կենտրոն համայնքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 13.04.2004թ.) հանձնվել է Թողարկողի տիրապետմանը և օգտագործմանը: Պայմանագիրը կնքվել է 6 տարի ժամկետով: Վարձակալության արժեքն է տարեկան 3 մլն դրամ (ամսեկան 250,000 դրամ), որը ներկայումս ձևավորված միջին շուկայական արժեքից բավականին ցածր է:

2) Թողարկողի խորհրդի նախագահ Արմեն Արզումանյանի (միաժամանակ նա հանդիսանում է Թողարկողի գործադիր տնօրեն և խոշոր սեփականատեր) կողմից պարբերաբար փոխառություն է տրամադրվում Թողարկողին (որոնց մանրամասնությունները բացահայտված են 3.2.6. կետում բաժնուն), սակայն նրանց գինը չի գերազանցում տվյալ ժամանակահատվածում Թողարկողի կողմից ստացված փոխառությունների գնից:

3) Թողարկողն իր խորհրդի անդամ Արթուր Ծատուրյանին պարբերաբար տրամադրում է սպառողական վարկեր, որոնց պայմանները հաստատվում են Թողարկողի վարկային կողմիտեի կողմից (որոնց մանրամասնությունները բացահայտված են 3.2.6. կետում): Նշված որոշումների կայացման ընթացքում հաշվի են առնվում վարկային տոկոսադրույքները և վարկի օգտագործման ժամկետները, ինչպես նաև արտոնյալ պայմաններով վարկի տրամադրումը կիրառվել է Թողարկողի կողմից որպես Ա. Ծատուրյանին խրախուսման միջոց:

### **3.5. Տեղեկություններ Թողարկողի հետ փոխկապակցված անձանց, թողարկողի սեփականատերերի վերաբերյալ**

#### **3.5.1. Տեղեկություններ Թողարկողի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ**

**ա.** Թողարկողի հետ փոխկապակցված անձ է համարվում ՀՀ քաղաքացի Արմեն Արզումանյանը: Նրան է պատկանում Թողարկողի սովորական բաժնետոմսերի 100%-ը և արտոնյալ բաժնետոմսերի 98.85%-ը: Վեջին 3 տարիների ընթացքում նա զբաղեցրել է Թողարկողի խորհրդի նախագահի ու գործադիր տնօրենի պաշտոնը:

**բ.** Թողարկողը չունի իրավաբանական անձ հանդիսացող փոխկապակցված անձ:

#### **3.5.1. Տեղեկություններ Թողարկողի նշանակալից սեփականատերերի վերաբերյալ**

Թողարկողը չունի ֆիզիկական կամ իրավաբանական անձ հանդիսացող նշանակալից սեփականատերեր:

### **3.6. Տեղեկություններ Թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ**

**3.6.1.** Թողարկողի կողմից նախկինում թողարկվել են ոչ փաստաթղթային անվանական սովորական բաժնետոմսեր և ոչ փաստաթղթային անվանական արտոնյալ բաժնետոմսեր:

**3.6.2.** Թողարկողի կողմից թողարկված սովորական և արտոնյալ բաժնետոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված չեն:



**3.6.3.** Թողարկողի կողմից թողարկված և տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի քանակը ազդագիրը ներկայացնելու պահին կազմում է 60,000 հատ՝ յուրաքանչյուրը 2,500 ՀՀ դրամ անվանական արժեքով: Տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 150,000,000 ՀՀ դրամ:

Թողարկողի կողմից թողարկված և տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի քանակը կազմում է 2,000 հատ՝ յուրաքանչյուրը 2,500 ՀՀ դրամ անվանական արժեքով: Տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը կազմում է 5,000,000 ՀՀ դրամ:

**3.6.4.** Թողարկողի կողմից թողարկված սովորական և արտոնյալ բաժնետոմսերը մարման ժամկետ չունեն, այսինքն՝ դրանք կշրջանառվեն այնքան ժամանակ, քանի դեռ Թողարկողը չի վերակազմակերպվել կամ լուծարվել:

**3.6.5. Սովորական բաժնետոմսերի համար**

Համաձայն Թողարկողի կանոնադրության՝ Թողարկողի սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

- մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.
- մասնակցել Թողարկողի կառավարմանը,
- ստանալ շահութաբաժիններ՝ Թողարկողի գործունեության շահույթից.
- առաջնահերթ կարգով ձեռք բերել Թողարկողի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.
- ստանալ Թողարկողի գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով, ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին.
- ժողովներում իրենց իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.
- հանդես գալ առաջարկություններով ժողովներում.
- ժողովներում քվեարկել իրենց պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.
- դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.
- Թողարկողի լուծարման դեպքում ստանալ իրենց հասանելի գույքի մասը.
- ունենալ օրենքով և Թողարկողի կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

**Արտոնյալ բաժնետոմսերի համար**

Համաձայն Թողարկողի կանոնադրության՝ Թողարկողն իրավունք ունի թողարկել միայն հաստատագրված շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսեր:

Արտոնյալ բաժնետոմսի սեփականատերն իրավունք ունի յուրաքանչյուր արտոնյալ բաժնետոմսի համար անվանական արժեքից ստանալ տարեկան 12% շահութաբաժին, իսկ լուծարային արժեք՝ անվանական արժեքի չափով:

Արտոնյալ բաժնետոմսի սեփականատերերը ժողովում ստանում են ձայնի իրավունք, եթե ժողովում քննարկում են՝

- Թողարկողի վերակազմակերպման կամ լուծարման հարցեր,
- կանոնադրության փոփոխման կամ լրացման հետ կապված այնպիսի որոշումներ, որոնք սահմանափակում են արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները,
- այն բոլոր հարցերը, որոնք հետևում են տարեկան այն ժողովին, որում չի ընդունվել որոշում՝ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները վճարելու մասին, կամ ընդունվել է որոշում՝ դրանք չվճարելու կամ ոչ լրիվ ծավալով վճարելու մասին: Նշված իրավունքը դադարում է արտոնյալ բաժնետոմսի դիմաց լրիվ ծավալով շահութաբաժինների առաջին վճարումից հետո:

Երեք հաջորդական տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին իրենց հասանելի շահութաբաժինների չվճարելը հիմք է հանդիսանում արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջ համար դիմել դատարեն՝ Թողարկողին դատական կարգով լուծարելու համար:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով արտոնյալ բաժնետոմսի սեփականատերերը սովորական բաժնետոմսերի սեփականատերերի համեմատությամբ օշտված

են շահութաբաժինների և լուծարման դեպքում լուծարային գույքից մաս ստանալու առաջնահերթության իրավունքով:

Թողարկողի սովորական և արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը պարտավոր են չիրապարակել Թողարկողի գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները: Գաղտնիք ներկայացնող տեղեկությունների ցանկը սահմանում է խորհուրդը:

**3.6.6.** Թողարկողի կողմից թողարկված բաժնետոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված չեն:

**3.6.7.** Թողարկողի կողմից թողարկված սովորական և արտոնյալ բաժնետոմսերը չեն վաճառվում ֆոնդային բորսայում, իսկ վերջին 2 տարիների ընթացքում գործարքներ չկատարվելու հետևանքով բացակայում են այդ արժեթղթերով գործարքների գների վերաբերյալ տեղեկություններ:

**3.6.8.** Թողարկողի կողմից թողարկված սովորական բաժնետոմսերով կատարվել է բաժանման 2 դեպք, մասնավորապես՝

- ա) 19.03.2003թ. բաժնետերերի ժողովի որոշմամբ 260 հատ 500,000 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերը բաժանվել և փոխարկվել են 2,600 հատ 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերի, այսինքն՝ բաժանումը տեղի է ունեցել 1/10 բաժանման գործակցով,
- բ) 30.11.2004թ. բաժնետերերի ժողովի որոշմամբ 3000 հատ 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերը բաժանվել և փոխարկվել են 60,000 հատ 2,500 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերի, այսինքն՝ բաժանումը տեղի է ունեցել 1/20 բաժանման գործակցով:

Թողարկողն այդ ժամանակահատվածում բաց բաժնետիրական ընկերության վերակազմակերպվելու նպատակ է հետապնդել, և բաժնետոմսերի բաժանման գործընթացները պայմանավորված են եղել առավել ընդգրկուն կերպով բաժնետիրացումն իրականացնելու նպատակով, այսինքն՝ համեմատաբար փոքր անվանական արժեքով բաժնետոմսերի պարագայում ավելի շատ ներդրողներ հավաքագրելու հնարավորություն կրնձեռվեր: Սակայն հետագայում Թողարկողը ձեռնպահ մնաց վերակազմակերպման գործընթացից:

Ինչ վերաբերվում է Թողարկողի կողմից թողարկված արտոնյալ բաժնետոմսերին, ապա նրանցով փոխարկման, բաժանման, համախմբման, ձեռքբերման կամ հետգնման դեպքեր չեն գրանցվել:

## **ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**

**Հավելված 1.** «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմսերի բաժանորդագրության ընթացակարգ

**Հավելված 2.** Ֆինանսական հաշվետվություններ  
(2005թ., 2006թ., 2007թ., 2008թ. I և II եռամսյակ)

## ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

### «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ անվանական արժեկտրոնային պարտատոմսերի բաժանորդագրության

#### 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- 1.1. Հիմք ընդունելով «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Թողարկող) տնօրենների խորհրդի 19.06.2008թ. թիվ 06-19-01 որոշումը և Թողարկողի ու «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Բանկ) միջև 16.05.2008թ. կնքված թիվ IB/08-001 պայմանագիրը, Բանկը ստանձնել է երաշխավորված եղանակով տեղաբաշխել Թողարկողի 150,000,000 (մեկ հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով պարտատոմսերը (այսուհետև՝ պարտատոմսեր) հետևյալ պայմաններով.

<b>Պարտատոմսի դասը</b>	Անվանական արժեկտրոնային պարտատոմս
<b>Պարտատոմսի ձևը</b>	Ոչ փաստաթղթային
<b>Պարտատոմսերի արժեկտրոնային եկամտաբերությունը</b>	տարեկան 12%
<b>Շրջանառության ժամկետը</b>	18 ամիս
<b>Շրջանառության ձևը</b>	Ազատ շրջանառության իրավունքով
<b>Տեղաբաշխման ենթակա ծավալը</b>	150,000,000 ՀՀ դրամ
<b>Անվանական արժեք</b>	25,000 ՀՀ դրամ
<b>Քանակ</b>	6,000 հատ
<b>Արժեկտրոնի (տոկոսագու-մարների) վճարման պարբերականությունը</b>	Արժեկտրոնների (տոկոսագումարների) վճարումը կատարվում է տեղաբաշխման առաջին օրվանից հետո կիսամյակային պարբերականությամբ

**Տեղաբաշխման գնի որոշման բանաձև**

$$P = \frac{N}{(1+t \cdot R/m)} * \left\{ c * \sum_{j=1}^n \frac{1}{(1+R)^{j-1}} + \frac{1}{(1+R)^{n-1}} \right\}$$

որտեղ՝

- P – պարտատոմսի հաշվարկված (տեղաբաշխման) գինն է,
- N – պարտատոմսի անվանական արժեքն է,
- R – պարտատոմսի ներդրումային եկամտաբերության կիսամյակային տոկոսադրույքն է,
- t – մինչև տվյալ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակն է,
- m – ընթացիկ կիսամյակում ընդգրկված օրերի քանակն է,
- c – կիսամյակային վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է,
- n – մնացած արժեկտրոնների վճարումների քանակն է, ընդ որում n արժեքը պարտատոմսի շրջանառության ընթացքում փոփոխվում է ըստ նվազման, այսինքն՝ 3-1 միջակայքում,
- j – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոփոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարում մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կախված, ընդ որում՝ j արժեքը փոփոխվում է ըստ աճման և ընդունում է 1-n արժեքները (երբ n-ը ընդունում է 1 արժեք, j-ն նույնպես ընդունում է 1 արժեքը):

- 1.2. Հիմք ընդունելով Թողարկողի ու Բանկի միջև 16.05.2008թ. կնքված թիվ IB/08-001 պայմանագրի 2.2.5. կետի պահանջները՝ Բանկը լիազորված է.
  - ա) ձևավորել տեղաբաշխողների խումբ (սինդիկատ)՝ համապատասխան համաձայնագիր կնքելու միջոցով,
  - բ) կազմակերպել պարտատոմսերի ազատ բաժանորդագրություն՝ իր կողմից սահմանված կարգին համապատասխան:
- 1.3. Հաշվի առնելով, որ Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում են 1 տրանշով և այն, որ Բանկի գնահատականներով իրատեսական է նշված ծավալներն ազատ բաժանորդագրության միջոցով տեղաբաշխելը, Բանկը նախատեսում է որպես կայուն պարտավորություն ձեռք բերել 25,000,000 ՀՀ դրամ ծավալով (1,000 հատ) պարտատոմսերը, և 125 մլն ծավալով (5,000 հատ) պարտատոմսերը տեղաբաշխել սույն ընթացակարգին համապատասխան կազմակերպվող ազատ բաժանորդագրության միջոցով:

## **2. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

- 2.1. Պարտատոմսերի բաժանորդագրությունն իրականացվում է հետևյալ կարգով.
  - 2.1.1 Բաժանորդագրության եղանակով տեղաբաշխվող պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվում է բաց բաժանորդագրության եղանակով, որն սկսվում է պարտատոմսերի ազդագրի գրանցման օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրվանից և տևում 10 աշխատանքային օր,
  - 2.1.2 Պարտատոմսերի բաժանորդագրությունն իրականացվում է Բանկի կողմից:
  - 2.1.3 Պարտատոմսեր ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք (այսուհետ՝ ներդրողներ) կարող են մասնակցել բաժանորդագրությանը միայն սույն ընթացակարգի 2.1.1 կետում նշված ժամկետում: Ներդրողները կարող են ազդագիրը ստանալ Տեղաբաշխողի գտնվելու վայրից (հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Խանջյան 13/2), ինչպես նաև նրա ինտերնետային կայքից ([www.armswissbank.am](http://www.armswissbank.am)) կամ Թողարկողի գտնվելու վայրից (հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Չարենցի 58, բն. 1):
  - 2.1.4 Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսերի ձեռքբերման հաստատումը ներդրողն իրականացնում է սույն ընթացակարգին կից հաստատված հայտը սահմանված կարգով լրացնելու և Բանկին ներկայացնելու միջոցով: Ներդրողների կողմից հայտերը

կարող են ներկայացվել տեղաբաշխման ժամկետի ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում՝ ժամը 10:00-17:00-ն:

- 2.1.5 Պարտատոմսերի ձեռքբերումը կատարվում է ներդրողի կողմից հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռքբերելու համար անհրաժեշտ դրամական գումարը (որը որոշվում է հետևյալ ձևով՝ պարտատոմսերի ձեռքբերվող քանակ բազմապատկած տեղաբաշխման գին՝ հաշվարկված սույն ընթացակարգի 1.1. կետում սահմանված բանաձևով) Բանկում բացված 25000130500310 բանկային հաշվին միանվագ մուտքագրելուց անմիջապես հետո: Եթե ներդրողի կողմից համապատասխան դրամական միջոցները սույն կետում նշված բանկային հաշվին վճարվել են մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00-ն, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվել են տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը և համապատասխան պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվում է այդ օրվա հաշվարկով:
- 2.1.6 Պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարները Բանկ են մուտքագրվում անկանխիկ եղանակով: Ֆիզիկական անձինք իրավունք ունեն պարտատոմսերի ձեռք բերման գումարները մուտքագրել նաև կանխիկ եղանակով: Կանխիկ եղանակով գումարները մուտքագրելու դեպքում ներդրողը պարտատոմսերի ձեռք բերման հայտին կից Բանկ է ներկայացնում նաև անձնագրի պատճենը:
- 2.1.7 Բանկը 2.1.5. կետում նշված բանկային հաշվին գումարի ստացման օրվա ընթացքում «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ (այսուհետ նաև՝ ՀԿԴ) է ներկայացնում Թողարկողի թողարկման հաշվից պարտատոմսերի փոխանցման հանձնարարագիր՝ ՀԿԴ-ի կանոններով սահմանված կարգով:
- 2.1.8 Բանկի կողմից 2.1.5. կետում նշված գումարը Թողարկողի տնօրինմանն է հանձնվում միայն ՀԿԴ-ում կամ լիցենզավորված այլ պահառուի մոտ ներդրողների համար բացված համապատասխան արժեթղթերի հաշվին պարտատոմսերի գրանցվելուց հետո:
- 2.1.9 Եթե տեղի է ունեցել պարտատոմսերի գերբաժանորդագրություն, ապա ներկայացված հայտերը բավարարվում են առաջնահերթության կարգով, իսկ եթե տեղաբաշխման որևէ օրվա ընթացքում ներկայացված հայտերում ձեռք բերվող պարտատոմսերի ծավալը գերազանցում է տվյալ օրվա ընթացքում չվաճառված պարտատոմսերի ծավալին, ապա՝ մասնակիորեն՝ ըստ ներկայացված քանակների կազմված համամասնության: Ընդ որում՝ եթե առաջանում են ոչ ամբողջական պարտատոմսեր, ապա դրանք ենթակա են կլորացման թվաբանական կլորացման եղանակով: Չբավարարված պարտատոմսերի համապատասխան դրամական միջոցները Բանկի կողմից ենթակա են վերադարձման երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով (պարտատոմսերի ձեռք բերման հայտերում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):
- 2.1.10 Տեղաբաշխման ընթացքում ներդրողները պարտատոմսերով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկություններ կարող են ստանալ ՀԿԴ-ից կամ լիցենզավորված այլ պահառուից (որտեղ բացված է տվյալ ներդրողի արժեթղթերի հաշիվը)՝ նրանց ներքին կանոններով սահմանված ժամկետներում գործարքի վերաբերյալ հաշվետվություններ (քաղվածքներ) ստանալու միջոցով:
- 2.1.11 Ներդրողները պարտատոմսերի հայտերը մուտքագրելուց հետո 9 ժամվա ընթացքում (աշխատանքային ժամերին) կարող են գրավոր կերպով Բանկից ամբողջությամբ կամ մասնակի հետկանչել իրենց բաժանորդագրությունները՝ եթե մինչև այդ ներդրողների հայտերը չեն բավարարվել և տվյալ հայտերի հիման վրա գործարքներ չեն կատարվել: Երբ ներդրողի կողմից բաժանորդագրությունը հետ է կանչվում մաս-

նակիրեն, ապա նախկինում ներկայացված հայտը համարվում է անվավեր և 2.1.4 և 2.1.5-րդ կետերում նշված կարգով տրվում է նոր հայտ:

- 2.1.12 Հայտի ամբողջությամբ կամ մասնակի հետկանչման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետվերադարձման ենթակա գումար, ապա հայտի հետ կանչման ամսաթվից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Բանկի կողմից ենթակա է վերադարձման՝ անկանխիկ եղանակով (պարտատոմսերի ձեռք բերման հայտերում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):
- 2.1.13 Տեղաբաշխումը չեղյալ ճանաչվելու դեպքում ներդրողների գումարները վերադարձվում են տեղաբաշխման չեղյալ ճանաչելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով (պարտատոմսերի ձեռք բերման հայտերում ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով):
- 2.1.14 Սույն ընթացակարգը չի տարածվում տեղաբաշխման խմբի կողմից պարտատոմսերի ձեռք բերման գործընթացի վրա:

### **3. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 3.1. Բաժանորդագրության ընթացքում պարտատոմսերում ներդրման եկամտաբերությունը հաշվարկվում է տարեկան 12 տոկոս եկամտաբերությամբ:
- 3.2. Բաժանորդագրության ընթացքում պարտատոմսերի ձեռքբերման հայտերի բացակայությունը և պարտատոմսերով գործարքների չկատարումը պարտատոմսերի տեղաբաշխումը չեղյալ ճանաչելու հիմք չեն:
- 3.3. 2.1.1 կետում նշված ժամկետի վերջին օրվա ժամը 17:00-ի դրությամբ չտեղաբաշխված Պարտատոմսերը ձեռք են բերվում Բանկի կողմից:

ՊԱՐՏԱՏՈՍՍԵՐԻ ՁԵՌՔԵՐՄԱՆ

Հ Ա Յ Տ

---/-----/2008թ.

(Հայտ ներկայացնողի անվանումը (անունը, ազգանունը))

(Պետական գրանցման համարը (ԱՆՁը հաստատող փաստաթղթի համարը) և տրման անսաթիվը)

(Գտնվելու վայրը (Հաշվառման վայրը) և կապի միջոցները)

Սույնով ցանկանում եմ ձեռքբերել «Էքսպրես Կրեդիտ ՈւՎԿ» ՓԲԸ-ի պարտատոմսերը՝ \_\_\_\_\_ հատ՝ \_\_\_\_\_ ընդհանուր անվանական արժեքով: (նշվում է անվանական արժեքը թվերով)

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անվանումը	Արժեթղթերի հաշվի համարը
Դրամական միջոցների փոխանցման (նուտքագրման) անսաթիվը	
Բանկային հաշվի համարը	

Ստորագրություն \_\_\_\_\_

Անուն, Ազգանուն<sup>1</sup> \_\_\_\_\_

Հիշեցում՝ Եթե Ներդրողի կողմից համապատասխան դրամական միջոցները համապատասխան բանկային հաշվին վճարվել են մինչև կոնկրետ աշխատանքային օրվա ժամը 16:00-ն, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվել են կոնկրետ աշխատանքային օրվա ժամը 16:00-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը և համապատասխան Պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվում է այդ օրվա հաշվարկով:

<sup>1</sup> Իրավաբանական անձի դեպքում լրացվում է լիազորված անձի անունը, ազգանունը և պաշտոնը, իսկ հայտը կնքվում է տվյալ իրավաբանական անձի կնիքով:



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
Ֆինասական արդյունքների մասին (Ձև 1)

«31» Դեկտեմբերի 2005թ.

«Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ ք. Երևան Չարենցի 58 բն. 1  
(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազ. դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրու- թյուններ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային և մմանատիպ եկամուտներ	3	288629	160893
Տոկոսային և մմանատիպ ծախսեր	4	62683	35842
<b>Չուտ տոկոսային եկամուտ</b>		225946	125051
Շահաբաժնի տեսքով եկամուտներ			
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ			
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր			
Առևտրային նպատակներով պահվող ներդրումներից զուտ շահույթ/(վնաս)	5		
Վաճառքի համար նախատեսված ներդրումներից զուտ շահույթ/(վնաս)	6		
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից զուտ շահույթ/ (վնաս)			
Արտարժույթային գործարքներից ստացված զուտ շահույթ/( վնաս)	7	-22436	-14049
Այլ գործառնական եկամուտներ	8	40536	33441
<b>Գործառնական եկամուտներ</b>		18100	19392
Վարկերից և այլ փոխառվություններից առաջացած կորուստներ	9	-108550	-77910
Ընդհանուր վարչական ծախսեր	10	-24054	-22703
Այլ գործառնական ծախսեր	11	-7893	-6320
<b>Շահույթ մինչև հարկվելը</b>		103549	37510
Շահութահարկի գծով ծախս /փոխհատուցում/	12	25529	10315
<b>Շահույթ (վնաս) հարկումից հետո</b>		78020	27195
Մեկ բաժնետոմսին ընկնող բազային շահույթ			
Մեկ բաժնետոմսին ընկնող նոսրացված շահույթ			

Վարկային կազմակերպության վարչության նախագահ \_\_\_\_\_  
(գործադիր տնօրեն)  
Գլխավոր հաշվապահ \_\_\_\_\_

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ (Ձև 2)

Ենթահավելված 2

«31» Դեկտեմբերի 2005թ/

«Էքսպրես Կրեդիտ ՌԻՎԿ» ՓԲԸ ք.Երևան Չարենցի 58 բն.1  
(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազ. դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրու- թյուններ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
<b>1</b>	<b>Ակտիվներ</b>			
1.1	Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	13	16413	58467
1.2	Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ներդրումներ	14		
1.3	Բանկերում տեղաբաշխված միջոցներ	15		
1.4	Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ	16		
1.5	Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ	17	962652	526373
1.6	Վաճառքի համար նախատեսված ներդրումներ	18		
1.7	Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	19		
1.8	Վարձակալության գծով ստացվելիք գումարներ	20		
1.9	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,	21		
1.10	Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում			
1.11	Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում		1598	1929
1.12	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	22	9568	11718
1.13	Հետաձգված հարկային ակտիվներ		300	210
1.14	Ստացվելիք տոկոսներ	23	7834	5303
1.15	Այլ ակտիվներ	24	14424	5323
	<b>Ընդամենը՝ ակտիվներ</b>		<b>1012789</b>	<b>609323</b>
<b>2</b>	<b>Պարտավորություններ</b>			
2.1	Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	25	9004	13
2.2	Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ	26		
2.3	Հաճախորդներից ներգրավված փոխառություններ	27	711488	405531
2.4	Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ			
2.5	Վարձակալության գծով վճարվելիք գումարներ			
2.6	Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր	28		
2.7	Պահուստներ		2419	
2.8	Վճարվելիք գումարներ	29	62	
2.9	Հետաձգված հարկային պարտավորություններ			
2.10	Վճարվելիք տոկոսներ		12524	3932
2.11	Այլ պարտավորություններ	30	37135	12418
	<b>Ընդամենը՝ Պարտավորություններ</b>		<b>772632</b>	<b>421894</b>
<b>3</b>	<b>Կապիտալ</b>			
3.1	Կանոնադրական կապիտալ	31	155000	155000
3.3	Պահուստներ,			
3.3.1	Գլխավոր պահուստ		7137	5234
3.3.2	Վերագնահատման պահուստներ	32		
3.4	Կուտակված շահույթ (վնաս)		78020	27195
	<b>Ընդամենը՝ Կապիտալ</b>		<b>240157</b>	<b>187429</b>
	<b>Ընդամենը՝ Պարտավորություններ և կապիտալ</b>		<b>1012789</b>	<b>609323</b>

